



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1837

232.9

0 - 33

1874

2010

Cubos y prismas de sección regular

Mrs. Battarbee

Am 464.

א' ט' ע'

W E B B O U R N A L

ՎՀԱՏԱԳԵԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ

Համար

Փրկչի խօսքերից՝ որ ասաց Վա առաքեալ-
ներին փոթորկից բարձրացած ժամանակ.

"בְּנֵי בָּנָיו."

Digitized by srujanika@gmail.com

Եւ Պ արդանեանցի:



PAPERS

Տպարանի Առաջավեճանցիւ և Ընկ.

1874

2.32.9

卷 - 33

464.

arm.
464.

232.9
b=33

Տ Ե Ա

12012

ՈՒԽԻԹԱԾՈՒԹՅԱՆՑ

ՎՀՊԱԳԵԱԼ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐԻ
ՀԱՄԱՐ

Փրկչի Խօսքերից՝ որ ասաց Դամ առաքեալ-
ն փոթորիկը բարձրացած ժամանակ.

“ԵՍ ԵՌ”:

ՁԱՅ ԳՅԱՆՆԵՐԵՐՆ

Ե Ա ԱՐԴԱՆԵԱՆԳԻ.



Տ Ե Գ Ա Բ

Ե Տպարանի Աշալաֆէեանցի. Ընկ.

1874

(201)

ԱՅ ԵՎԻ:

Дозволено цензурою. Тифлисъ.
30 Октября 1871 года.

50169-ահ



36453.66

2001

ՈՎ քրիստոնեայ, երբ գնաս դու փոթո-
րիկ բարձրացած ժամանակ կենաց ճանա-
պարհի վերա, երբ որ հոգսեր, նեղութիւն-
ներ, վնասներ և փորձութիւններ սև ամպի
պէս պատեն բեղ և տրտմութեան մէջ ընկըզ-
մեն (իշղուն). երբ շփոթուի և խորվի քո
նուազեալ (Առաջացած) հոգիդ. երբ հոգմերը
(քաղաքներ) և արեգները (տուղաներ) բազինն
(Առաջնուններ) քո խախուտ (առիլուն, Առաջնուն)
նաւակիդ այնպիսի զօրութեամբ՝ որ մօտ է
ընկղմելու, ովլ յաղթահարեալ, ալէկոծեալ,
անմիսիթար ողորմելի լսիր քո Փրկչի ձայնը,
որ գալիս է ջրերի վերայով դէպի բեղ և
գոշում. „Ես եմ” մի վախենար (Մատու,
47, 27.). Ճաւատը երջանիկ է անում մեզ:
Եյս աշխարհը արտասուց ծոր է. սակայն
Աստուածային Արտակարսը այցելութիւն
եկաւ մեզ միսիթարելու համար. Դմեն բան
մեր շորս կողմից գլուխ է բարձրացնում մեր
դէմ. իսկ աւետարանը պատուիրումէ որ
չվախենք ոչ մի բանից: Աստուծոյ և մեր Փրկ-
չի մօտութիւնը կարող է երջանիկ անել մեզ
ամեն տրտմութեանց մէջ և քաջութիւն տալ
վախերի մէջ: Ճաւատն դէպի այն — ամենա-

բարի, ամենակարող և միշտ փրկելու պատրաստ Տէրն է ամենապատռական դարման վախի և տրտմութեան՝ դէմ:

Մի անգամ Քրիստոսի աշակերտք յանկարծ բռնուեցան մբրկալից քամուց Կալիցեաց ծովի մէջ: Գորանից փոքր առաջ նոցա վարդապետը հրաշալի կերպով կերակրել էր հինգ հաղար մարդին հինգ հացով և երկու ձուկով: Ճողովուրդը այնքան ափշած էր այդ հրաշրի վերա՝ որ կամենումք նոյն ժամայն թագաւոր անել ՚Վորան: Բայց Որդին Վաստուծոյ չեկու աշխարհ թագաւորելու, այլ չարչարուելու: ՚Վարձակեց ժողովուրդին որ Խաղաղութեամբ գնան իւրեանց տները և ՚Նքը առանձնացաւ սարի վերա աղօթք անելու՝ հրամայելով աշակերտաց որ նաւը մտնեն և ծովի միւս կողմը անցնեն: Շատ հաւանական է որ աշակերտք չասկացան իւրեանց վարդապետի այս կարգադրութեան պատճառը: Ըտար բան պիտի երեւ նոցա. ինչո՞ւ համար էր Փրկիչը մնակ մնում և արձակում ժողովրդին. ինչո՞ւ էր ՚Վահեացնում իրանց ՚Վոր ներկայութենից: — ՚Նմէ ՚Վակամենումք մնակ մնալ, ապա ինչո՞ւ պիտի իրանք չսպասէին ՚Վորան ծովի ափումք: ՚Վահեաց պիտի գնար նոցա ետեկի՝

եթէ առնեին նոքա նաւը և գնային: Բայց հրամանը տուած էր և այս բաւական էր: Ռիշտ այսպէս և քրիստոնեաներին շատ է պատահում այնպիսի փորձութիւններ, որոց իմաստուն նպատակը ծածկուած էր իրանցից: Նազանդ աշակերտը շասում ինչո՞ւ պիտի անեմ այս բանը. թէ ինչո՞ւ է նշանակուած իմ համար այս փորձութիւնը, նա մանաւանդ կասէ. ՏԵ՛՛ ի՞նչ ես ուղում՝ որ անեմ: ՚Նմէ մի ընտանեաց հայր, նաւապետ, կամ զօրապետ տալիս են շատ անգամ այնպիսի հրամաններ, որոց պատճառը կամ նպատակը թէն հասանելի չեն, բայց կատարվումն առանց յապալելու, ապա արժա՞ն է մեզ՝ կանգ առնել և փորձել ՚Տիրոջ, փոխա նակ շտապելու և անընդգիւմաբար կատարելու ՚Վորա հրամանները, արգեօք սպասմնք որ ՚Վահե էլ ասէ յանդիմաննելու կերպով, ոքո ի՞նչ հոգսդ է, գու իմ ետեկս եկ՝ (ՀՅԱՂ, խմ. 23.):

Վ. Յո՛ քրիստոնէի պարտաւորութիւնը շատ անգամ երեսում ոչ միայն անհասանելի, այլ և անհամաձայն իւր բարի գիտաւորութեանց: ՚Նչուրախութեամբ պիտի մնային աշակերտքը իւրեանց ՚Վարդապետի մօտ: ՚Վանելով նաւը առանց ՚Վորան՝ չմատացին արգեօք թէ իրանք զրկվումն ՚Վորա բարերար ներ-

հայութիւնից: Ճ'իշդ այսպէս քրիստոնէին
էլ շատ անգամ կարելի է երեխ. թէ կա-
տարելով իւր պարտաւորութիւնը՝ նա վնաս-
ներ պիտի կրէ և ոչ միայն նիւթական,
այլ և հոգեւոր: Ինայց թո՞ղ նա երեակայէ
թէ հետեւով Տիրոջ ճանապարհին որ ան-
հասանելի էր իրան, դանելու չէր այնքան
պատեհութիւններ որ գործէրը արեպաշտական
երեւլի գործեր, սակայն նորա պարտաւորու-
թիւնն է ընթանալ Տիրոջ ճանապարհով:
Թո՞ղ երեակայէ նա ինչ և իցէ հետեւնքներ,
սակայն թեթևացնում չեն նոքա հնազան-
դութեան պարտաւորութիւնը: Ու որ հաս-
տատ է Տիրոջ հնազանդութեան մէջ, — նա
է ստուգապէս յաջողում կատարելութեան
տանող ճանապարհի մէջ: Այս պարտաւորու-
թեան կատարումը անբաժան է Աստուծոյ
օրհնութիւնից: Հաճելի և օգտակար կլինէր
աշակերտաց մնալ Փրկչի մօտ. բայց նոքա
շատ աւելի շահեցին Իրան հնազանդելով
Դորանից հեռու լինելովը. քան թէ պիտի
շահէին, երբ ընդգէմ Դորա կամաց՝ մնային
Դորա մօտ: Հնազանդութիւնը ամենից
աւելի մօտութիւն է Փրկչի հետ:

Խաղաղ և գեղեցիկ էր երեկոն՝ երբ
աշակերտը նաւ նստեցին: Հյերեկով փո-
թորիկի նշան անգամ շկար, եթէ ոչ հինգ

հաղար ժողովուրդը չէր կարող նստիլ իսոտի
վերա՝ որ վայելէր հրաշալի կերակուրը:
Իսյց երբ աշակերտք թողուցին ափը, իս-
կոյն ծովը սկսեց կատաղել սաստիկ քամուց,
— սակայն առաջուց կարծումէին նոքա
թէ իրանց նաւարկութիւնը պիահի լինէր
ուրախ և հանդարտ կերպով: Ո՞ի և նոյնը
լինումէ մեզ հետ էլ: Շատ անգամ է պա-
տահում՝ որ փոթորիկը յարձակվումէ հաւա-
տացելոյ վերա այն ժամանակ, երբ նա
ընաւ սպասում չէր այդ: Յաջողակ սկիզբը
միշտ չգուշակում յաջող հետեանք: Առաւո-
տեան պայծառ արեգակը կէս օրին կարող է
ծածկուիլ թանձր ամպերով. գեղեցիկ օրին
կարող է հետեւիլ ամենամրկալից գիշեր, և
ովկիանոսը որ հարթ ու ողորկ է արգէն իւր
մակերեսութի վերա որպէս հայելի, փոքր
ժամանակ շանցած կարող է ալէկոծիլ հիմն
՚ի վեր: Ո՞եր պատուական գանձերը կարող
են յանկարծ կորչիլ և ամենազուարձալի
րյսերը յաւիտեան ոչընչանալ խաղաղ եւ
ամենագեղեցիկ եղանակը վտանգաւոր է ար-
գէն այն պատճառաւ՝ որ երբէք չունի հաս-
տատութիւն: Ապասո՞ւմ չեն արգեօք նաւա-
վարք մրրիկների ու փոթորիկների և հոգում
չեն յառաջագոյն խարսխի կամ ուրիշ միջոց-
ների համար՝ որ վտանգի ժամանակ կարո-

զանան ազատուիլ: Ապա որքան անմիտ են նոքա, որ նաւարկումեն ալէկոծեալ կենաց ովկիանոսի մէջ առանց ուղիղ եւ անփոփոխ խարսխի — քրիստոնէական յուսոյ: Միշտ պէտքէ պատրաստ գտնուինք մէք փոթորիկների գէճ՝ որ չ'յաղթուինք նոցամեր վերա հասած ժամանակը: Իսկ եթէ Փրկիչը մեր հետն է, ամենակատաղի փոթորիկը անգամ կարող չէ վնասել մեզ: Աւընդ հակառակը ամենախորին հանդարտութեան մէջ երկիւղ կայ առանց Կորան:

Կայեցէ՛ք աշշակերտների վերա՝ նորա — ալէկոծեալ նաւի մէջ են. նոքա — պատերազմումեն ալիքների հետ: Քաղցրիկ զեփիւալ որ հնչումէր նոցա խարիսխ վերառած ժամանակը փոխարկուած է արդէն մրրկի: Կոքա ցած թողուցին առագաստը որ պիտանի չէր այլ ևս, սկսեցին թիակներով աշխատել: Այդ միջոց գիշերը շատ մութն էր: Կոքա վտանգի մէջ էին, որ հնչու որ իւրեանց փոքրիկ նաւը ծովի մէջ աեղն էր, նա մանաւանդ ալէկոծեալ ծովի: Բայց ամենից վատն էր այն, որ նոքա մէնակ էին, որովհեաեւ Փրկիչը իրանց հետ չէր: Վնչ ուղիղ նկարագրութիւն է այս այն պարագաների, որոնց այնքան շատ փորձառու են քրիստոնեաները: Աւ նոքա

պատերազմումեն ներհակ քամիների գէճ: Կորանց պատումեն մութն ամպ և սպանումի վտանգ: Աւ երբեմն Փրկիչը կարծվում շատ հեռու նոցանից: Կատաղի քամիները ամստկանումեն նոցա վերա: Օ՞անը վիշտեր՝ ցաւալի կորուստներ՝ բազմապատիկ հօգուեր՝ գառն անձկութիւններ՝ թշնամիներից վիրաւորութիւն կամ աւելի վատը, — բարեկամաց անտարբերութիւն՝ երկարատև հիւանդութիւններ՝ զիւրելքան աշխատանքի գաղարումն, կամ սրտամաշնութիւն մտերիմների կորսով որոց հետ միացած էր մեր կեանքը, — մի այնպիսի կորըստով՝ որ թողումեր մեր հօգու մէջ մի բացուածք, որ տեղը ինչ և իցէ աշխարհային բան կարող չէր բռնել կամ առաւել վատագոյնը, — հօգեոր թշնամոյ անդադար և ահարկու յարձակումները, երկմտութիւններ՝ տարակուսանք՝ մոլորութիւնք ճշմարտութեան մէջ՝ հօգոյ աղմուկ՝ տխուր վհատութիւն . . . ո՞հ, քանի՞ քանի՞ ամպեր են յարուցանում այս մրրկալից հողմերը հաւատացելոյ վերա, այնպէս որ լուսոյ մի կայծ անգամ չը կարողանայ թափանցել նորա սրտի մէջ և միսիթարել նորան, որ յուզված տառութերվումեր ալիքներից:

Աս էլ պիտի սպասեմ գորանց: Զէ՞ որ

աշակերտ եմ Փրկչի առանձին պաշտպանութեան տակ դրուած։ ԶԵ՞ որ խոստացաւ ՚Ա պահի ինձ ամեն չարիքից։ ԶԵ՞ որ ասաց ՚Ա թէ իւր հրեշտակներին հրամայել է որ պահեն ինձ և թէ ինձ չարիք պիտի չհասնի։ Եթէ նա իմ պաշտպանութեան բարի Փրկիչս և իմ բարեկամս է, ապա կարող են գալ իմ վերա այդպիսի խոռվութիւններ։ Այս՝ նոքա եկան աշակերտների վերա, թէպէտ Փրկիչն էլ այն ժամանակ աշխարհքումն էր։ ՚Ա չպաշտպանեց նորանց փոթորիկից, — այլ հաւատարիմ էր միշտ և հոգումեր նոցա համար։ Ովքրիստոնեայ՝ գու մի՛ զարմանար, եթէ երբեմն տեսնումես քեզ ալէկոծեալ ծովի մէջ։ Կարելի է յուսալ որ ովկիանոսը միշտ հանգարա լինի։

Աշակերտի կոչումը աւելի գերազանցումէ փորձութիւններ կրելով, որոնք ուղեկից են իրան, քան թէ ազատուելով չարչարանքից։ Համար նեղութիւններով պէտք է մեղմանել երկինքի արքայութիւնը” (Պատր. Քէ, 21.)։ Յիսուս Քրիստոսը խոստացաւ փրկել մեղմ փոթորիկից և ոչ թէ նորա առաղջը առնել։ Զեզ բաց ’ի մարդկային փորձութենից ուրիշ չէ պատահած։ բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ

պիտի չթողնէ ձեր կարողութենից աւելի փորձութիլ, այլ փորձութեան հետ ազատութեան միջոցն էլ կտայ, որ կարող լինիք համբերել” (ա. Արք. ք. 13.)։ Սուրբերը ամեն գարերի մէջ փորձութիւններ կրեցին և քաջ հանգիստացան փոթորիկների մէջ։ թէպէտ նոքա չպատահեցին երբէք նաւակութիւններ, սակայն ամենքը պատերազմեցին փոթորիկների հետ։ ՚Այն ինքն Փրկիչը չծածկեց իրան փոթորիկների երեսից։ ՚Ա իւր եղբայրների նման էր և մեր նման փորձութիւններ կրեց։ Ոյիրելիներ օտար բան մի՛ համարէք այն բորբոքած նեղութիւնը, որ ձեզ փորձելու համար կլինի, որպէս թէ մի օտար բան հանդիպած է ձեզ” (ա. Պէտ. դ. 12.)։

Այս փոթորիկները շատ անգամ պիտի բարձրանան մեր գէմ մինչև անգամ և այն ժամանակ, երբ մեք վարվումէինք համաձայն կամացն Աստուծոյ։ Աշակերտը առանց Փրկչի հրամանի չբարձրացրին առագաստը, այսու ամենայնիւ փոթորիկը հասաւ նոցա վերա։ Բայց ՚Ա գիտումեր որ շատ սաստիկ քամի պիտի լինի։ ՚Անքն թոյլ տուաւ նորան հնչելու։ Այս տեղից պիտի սովորենք մեք չբացատրել երբէք պարտականութիւնը նորա յաջողակ ելքով։ Նակա-

սութիւնը՝ որուն հանդիպումենք մեք հնա-
զանդութեան մէջոցին՝ գեռ ևս ապացոյց չե-
մբ մոլորութեան: Կա որ տալիս է օրէնք
իւր ծառաներին, իւր նոպատակին է ուղղում
բոլոր գէպերը: Կարելի է նա այս պէս է
բարեհաճում, որ մեք հնազանդելով նորա
կամացը՝ փոթորիկների հանդիպինք: Երբ
նա գծումէր մեր ճանապարհը, — գիտէր
արդէն բոլոր այն փորձութիւնները, որոնց
պիտի պատահէինք մեք: Մեք չենք համար-
ձակիլ յետ գառնալ: Երբոր հողմը ներհակ
կազմին էր գարձած, աշակերտքը ցանկացած
կլինէին յետ գառնալ գէպի ելերը, մանա-
ւանդ այն պատճառաւ որ Փրկիչը այն տեղ
էր: (Խայց նոքա հրաման էին ստացած որ
անցնեն միւս կողմ, և այս պատճառաւ շա-
րունակումէին՝ ճանապարհը թիւպարելով՝
թէպէտ չունէին գրեթէ ոչ ինչ յառաջադի-
մութիւն: Կոքա պատասխանատու չէին այն
հողմի համար որ փչումէր նոցա ներհակ,
այլ պատասխանատու կլինէին այն ժամանակ,
երբ գործ չ'գնէին բոլոր զօրութիւն՝ որ
ապացուցանէին Տիրոջ առաջեւ իւրեանց
հնազանդութիւնը: Կայս պէս և մեզ ոչ մի
արգելք չպիտի կանգնացնէ հնազանդութեան
ճանապարհի վերա: Ուստի միշտ մեր նաւը
լունայ, գէպի այն կողմը ուր գոշումէ մեզ

պարտականութիւնը, որքան էլ ահագին և
սաստիկ ալիքներ բարձրանան մեր գէմ: [Ըստ՝]
այնպէս թուփ, որպէս թէ նոքա մեզ յետ
են մզնում, իսկ եթէ մեք շգագարենք
պատերազմելուց՝ կունենանք իսկական յա-
ջողութիւն: Յիսուս Քրիստոս ազատու-
թիւն և յաջողութիւն խոստացաւ իւր ամեն
մի հաւատարիմ աշակերտին: Ուստի լաւէ
ամեն բան կորցնել Փրկչին հնազանդելով,
բան թէ բոլոր աշխարհը ստանալ յետ փախ-
չելով փոթորիկի երեսից: Վւելի լաւ է մեռա-
նիլ փոթորիկի մէջ, բան թէ փրկութիւն
խնդրել ապստամբական փախստի մէջ:
, Ասն զի ով որ ուղէ իւր անձը ապրացը-
նել, պիտի կորցնէ նորան, և ով որ իմ
համար իւր անձը կորցնէ, պիտի գտնէ
նորան” (Մատթ. 4: 25.), — ասաց Փրկիչը:
Արդ՝ մինչ պատերազմումն աշակերտք
հողմի և ալիքների հետ, — ուր է Փրկիչը:
Կա սարի վերա առանձնացած իւր ո՞ր
հետ՝ անցունցանումէ գիշերը աղօմքով: [Ստութէ Կա մոռացաւ իւր տարաբազզ ըն-
կերներին: Խայց նոքա Ե՞րբ չեն եղած Կոռ-
րա մըտքի և սիրող սրտի մէջ: Ան-
տարակոյս՝ նա մի և նոյն ժամանակ բա-
րեկիսումէր և նոցա համար: Կա բարեխօ-
սումէ և քո համար ո՛վ նեղսակիր և ալէ-

կոծալ քրիստոնեայ: „Աա միշտ կենդանի է մեր համար բարեխօս լինելու” (Եշր. է. 25): Ի՞նչ միմիթարական ճշմարտութիւն է այս: Վիշեր ու ցերեկ, փոթորիկի մէջ և խաղաղութեան ժամանակ՝ մատուցանվումէ ։ Աորա ամենազօրեղ ազօթքը: թէ՝ „Հայր, պահիր նորանց ամենաչարիքից”: Ովկ քրոստոնեայ գու երբէք մոռացուած չես նորանից: Ո՞վս սէսի ձեռները թուլանումէն՝ երբ նա ազօթք էր անում Խրայէլի որդոց համար, և երբ նոքա ցած էին լնկնում, յաղթութիւնը դառնումէր ։ մաղէկացոց կողմը: Բայց այս տեղ նա է, որ անհամեմատ մեծ կարողութիւն ունի քան թէ Ո՞վսէսը, Աա երբէք չթուլանում, նորան միշտ լսումէ Հայրը: Քո անունդ նորա սրտումն է, նա զրոշ մուած է բեկենների վէրքերով նորա ձեռների ափումը, ամեն փոթորիկ քամու ժամանակ նա սարի վերա է, և նորա բարեխօսութիւնը երաշխաւար է քո փրկութեանը: Եթէ քամին սաստիկ է և փոթորիկը չ'գոգարում, — մի՛ Խորհի՛ր՝ թէ նորա բարեխօսութիւնը ընդունված չէ: Դու չես կորչում փոթորիկի մէջ, — ահա քեզ ապացոյց նորա ազօթքի ստուգութեանը: Եթէ սպասումն խաղաղութեան՝ գու կսխալւես, իսկ եթէ սպասումն մի զօրութեան, որ օգնէ

քեզ համբերել փոթորիկին և ապա հասանել կատարեալ ազատութեան, — այն ժամանակ քո յոյսդ երբէք ամօթալի չթողնել քեզ: Փրկիչը ՚խնդրում չէ նորա համար, որ մեր օրերը լինէին խաղաղ, այլ իրբե պատասխան մեր ազօթքի տալիս է մեզ հաւաստի լինիլ՝ որ մեր զօրութիւնը պիտի տեսի մեր կեանքի օրերի չափ:

Փրկիչը չէ թէ միայն ազօթք արաւ իւր աշակերտների համար, այլ և գնաց նոցա ետեից այն փոթորիկ ժամանակը: Լոքա չկարողացան տեսնել նորան և կարծումէին, թէ նա էլ իրանց չտեսնում՝ պատճառ, ահա երբէք ժամից աւելի էր՝ որ գնումէին նոքա թիավարելով: Այն միջոց, ինչպէս ասուեց, գիշերը մութն էր, և այս պատճառաւ նոցա փոթորիկ նաւը կարելի չէր՝ որ տեսնուէր եզերքից: Բայց Փրկչի աչքը հսկումէր նոցա վերա: Աա տեսնումէր, թէ ինչպէս իւր իւրաք աշակերտքը, բայրո զօրութիւնից լնկած չեն դադարում թիակներով աշխատելուց, նա գիտումէր թէ ինչեր էին ծագում նոցա սրտի մէջ, նա տեսնումէր նորանց աշխատեալ և ծանրաբեռնեալ: Զգալիս նա նյոյնպէս և քո եակից՝ ո՛վ քրիստոնեայ, փոթորիկ ժամանակը: Ո՞ի՛ Խորհիր, որպէս զի քո վիճակդ յայտնի չլինէր ։ Լոքան, ո՛չ, քո հոգոյ

ամեն մի անձկութիւնը, քո սրտիդ ամեն ծածուկ վիշտերը յայտնի են նորա առաջն: Ա, ագիտումէ քո ամեն տարակուսութիւններդ, քո վախերդ, քո բոլոր փորձութիւններդ և երբ կտեսնէ որ ժամանակը հասած է, կդայ որ աղատէ քեզ:


Այս տեսանելի օգնութիւնը կարելի է շուտով չգայ: Ո՞իայն գիշերուայ չորրորդ պահումը աշակերտք տեսան զրկչին: Կնչ քան երկար էին այդ ժամերը նոցա համար: Ո՞ինչև երեք ժամն առաւտեան պատերազմեցին ալիբների դէմ: Հաւանական է, որ նոքա մտածած լինեն, թէ Տէրը մոռացաւ իրանց և ձգեց կատաղի մրրիկների կամացը, և մանապէս և նեղութեան մէջ լինող քրիստոնեաները կարելի է շատ ժամանակ մտածեն թէ Փրկիչը մոռանումէ հասուցանել իրանց խոստացեալ օգնութիւնը:

Իայց միայն մեզ է այսպէս երեսում: Ո՞ի թէ Տէրը իւր աշակերտների հետը չէր երբ հսկումք նոցա վերա եղերքից եւ աղօթում: Վոքա չպահուեցին կորստից, թէ պէտ տեսնում չէին իւրեանց պաշտպանին: Վոքա չաղատուեցին փոթոփրկի ժամանակ, թէպէտ պաշտպանուած չէին նորա երեսից: Այս Փրկիչը նոյնպէս մօտ է և մեզ իւր օգնութեամբը, թէպէտ մեք տեսնում չենք այս

օգնութիւնը: Ա ախերը կարող են երեխ անյաղթելի, հսկեւոր մթութիւնը կարող է պատել մեր հսկուն այնպէս, որ լուսոյ մի կայծ անգամ չժամանցէ իւր մէջ, եւ այսպիսի վիճակը կտել շարաթներով ամիսներով, տարիներով: Փրկիչը կուշանայ, րայց կուշանայ իւր յայտնութիւնովը եւ ոչ թէ օգնութիւն հասուցանելովը իւր աշակերտաց, — այս էլ բարի եւ իմաստուն նպատակաւ: Ո՞վ թէ, միշտ աղաղակէնք մեր սրտի խորքեցը, — Տէ՛ր, մեր կեանքը քո ձեռքի մէջ է”, — եւ թէ միշտ հաւատայինք, որ նա ուրիշ ոչ մի տեղ կարող չէ լինիլ այնքան ապահով, այն ժամանակ մեք չէինք կորցնիլ մեր արիութիւնը եւ կանգատիլ թէեւ տակաւին մինչև գիշերուայ չորրորդ պահն էլ պարտաւորուած լինէինք պատերազմել հակառակող հողմի դէմ: Տէրը մեղանից աւելի լաւ գիտէ ժամանակը, եւ աղատութեան ժամը անտարակյու կըգայ կըհասնի:

Երբ՝ վերջապէս, Փրկիչը յայտնուեց իւր աշակերտացը եւ Վոքա յայտնուելու եղանակը այնքան անակընկալ էր եւ սքանչելի, որ ուրախութեան տեղ երկիւղը եղաւ նոցա հսկու առաջնին շարժառիթը: Վա ժամեցաւ նոցա ալիբների վերա քայլելով:

36453-66



Ո՞ւ կսպասէր այդ: Եւ յսպիսի հրաշք
բնաւ տեսած չէին նոքա: Չնայելով անցեալ
հրաշքներին, աշակերտք համարումէին մրըր-
կայոյդ ծովը անանցանելի պատուար իւ-
րեանց վարդապետի համար: Եւ յս վերջի
հրաշքն էր՝ որուն միան աշակերք պիտի
սպասէին ՚Նորանից: Եւրբ գնումէր նա իւր
ճանապարհը ալիքների վերա բանալով,
նոցա վախը այնքան սաստիկ եղաւ, որ
չճանաչեցին իւրեանց Վզատչին և կարծում
էին թէ աչքի երեսյթ մի բան են տեսնում:
Ո՛հ, քանիցս անդամ պատահումէ և մել
սահման գնել Վմենակարողին. շատ անդամ
սեփականումենք ՚Նորան մեր գործողութեան
եղանակը: Ո՞եք երեսակայումենք անկարելի
այն, ինչ որ ՚Նորա ձեռին դժուար չէ:
Ո՞եք յուսահատվումենք օգնութեան սպա-
սելով՝ երբ իսկապէս նա արդէն մեր մօտ
է: Փոխանակ Տիրոջ աղաւելու և ՚Նորա
օգնութիւնը խնդրելու, ձգելով միանդամյն
օգնութէան եղանակը նորա ընտրութեան և
նուիրելով մեզ նորա իմաստուն կամացը, մեք
կարգադրումենք մտքով, — թէ ինչ կերպով
պիտի ստանանք այդ օգնութիւնը: Խաբուած
գոլով մեր յայսերում, կարծես, մեք արդէն
կանդատումենք, թէ մեր աղօթքը մնաց
առանց պատասխանւոյ: բայց մի և նոյն րո-

պէում անակնկալ կերպով ստանումենք
մեր փափագած աղասութիւնը: Ո՞ի զօրու-
թիւն՝ որ հարկաւոր էր փորձութիւն կրելու,
մեր աղօթքի պատասխան չէ՝ այնպիսի պա-
տասխան՝ որ բաւական էր մեզ աղատել նոյն
իսկ փորձութիւնից: Նոգեոր խաւարի ժա-
մանակ շարունակ աղօթք ան ելու շնորհքը
ճիշտ մի և նոյն նշանը չէ՝ Փրկչի հաւատար-
մութեան, այնպէս՝ որպէս թէ արեգակը ցրուէր
նոյն իսկ խաւարը: Ո՞ւկէտ թշնամին չէր
թողում մել, բայց Վատուծոյ մեծագոյն ողոր-
մութիւնը չէ, որ մեք զօրութիւն ունինք
շարունակել պատերազմը և յաղթելով բոլո-
րին՝ ամուր մնալ: Ո՞ւկէ փոթորիկը շարու-
նակ շառաչումէ, խազաղութիւն չկայ եր-
կար ժամանակ, սակայն Տիրոջ ողորմու-
թիւնը չէ, որ ալիքները մեզ չեն կլանում:
Վշակերտք շփոթուելով աղազակեցին թէ՝
,, սա աչքի երեսյթ բան է”:, ՚Նմանապէս
շատ անդամ մեք էլ սիալվումենք Փրկչի
յայտնուելու եղանակում և ներկայացնում:
Ո՞եք նայումենք վախոց այն բանին որ
պիտի հալածէր մեր երկիրը: Անունածածկ գե-
րագոյն շնորհքները որ մեք ստաբումենք
մեր եռանգուն աղօթքի միջոցու գետունեմենք
մեն մեզ անխաղաղութիւն և տրտմութիւն:
Ո՞եք ինչ կարծատես և անմիտ էակներ

ենք, չենք հասկանում մեր ամենամեծ իշարերի գիտաւորութիւնները: Շատ ժամանակ սարսում և գողումենք, երբոր պիտի լինէինք միանդամայն քաջ և արի, արտընջումենք փոխանակ գոհունակ լինելու: ԱվՏէր՝ օգնիր մեղ այն հաստատ հաւատը ունենալ Քո վերա որ մեր մտքով անդամ չանցնի նախասահմանել քո այցելութեան եղանակը, միայն թէ մեք Քո ընտրած կերպումը, թէ որքան նա սքանչելի և ահաւոր էլ լինի, միշտ կարող լինենք ճանաչել Քեզ մեր գրէշին:

Երբ Քո հետ ենք չկայ մեր համար անկարելի բան: Դու հիմա էլ շատ անգամ գալիս ես ջրերի վրայով և այն բանը՝ որ մեք համարումենք ահարկու և վնասակար, կարող ես առնել մեր աղատութեան միջոց: Որքան կատաղի էլ լինի փոթորիկը, որքան բարձրանան ալիքները, որքան մուժն էլ լինի գիշերը— ով Տէր՝ օգնիր մեղ որ խորին երկիրածութեամբ և սիրով ճանաչենք միշտ Քո մրրակարյզ ծովի վերա մեղ մօտենալդ եւ ներկայութիւնդ:

Փրկչի խաղաղարար ձայնը նոյն ժամին փարատեց աշակերտոց երկիրը, Այս եմ, մի վախենաք, "գոշեց" Կա: Ոչ աչքի երկոյթ բան, ոչ վրէժինդրութեան հրեշտակ, ոչ

խաւարի ոգի, — Ես եմ, ձեր վարդապետը՝ ձեր պաշտպանը՝ ձեր բարեկամը, ոչ մի բանից մի՛ վախենաք: Վնչ մսիթարական էին այս խօսքերը զահի հարեալ նաւորդաց համար: Ոչ ինչ կարող չէ այնքան թեթևացնել և նեղութեան մէջ լինող քրիստոնէից տըրտմութիւնը, որքան գէպի մեղ գոչող Փրկչի հեղահամբոյր ձայնը. Ես եմ: 'Կա հետո չէ մեզանից, մեր ամեն թշուասութեան և նեղութեան ժամանակը: Անք երբէք մէնակ չենք: Անք պաշտպանը միշտ մեր հետ է: Եւ ոչ միայն 'Կա մեր հետ է փոթորիկի ժամանակը, այլ 'Կա հենց ինքն է որ յարուցանումէ փոթորիկը և կառաւարում նորան: Անք պատրաստ ենք միշտ մեր փորձութիւնները օտար շարժառիթների ընծայել՝ մոռանալով որ առանց 'Կարա կամաց մի ճնճղուկ էլ չընկնիլ գետին: Ոմանք ասումեն, թէ այս պատահմունք է, ոմանք թէ այս թշնամոյ գործ է, բայց Փրկչւը ասումէ. Ես եմ: Վմեն մի պատահմունքի ժամանակ թէ երեելի լինի նա, մեր կարծիքով, և թէ հասարակ, 'Կա միշտ գոչումէ. Ես եմ: Թէ աղքատութիւն կրենք, թէ հիւանդութեան անկողնի մէջ չարչարութիւնք, թէ նեղութեան և տրտմութեան մէջ սրտարեկ լինենք և ինչ յատկութիւն որ ու-

նենայ փոթորիկը, որ կողմից որ գայ մեր վերա մրրիկը, միշտ դոչումէ գէպի մեզ Փրկիչը. Ես եմ: Ոչ միայն այն ժամանակ, երբ ջրերը հանդարտ են և ցոլացնումքն ամեն ստուեր իւրեանց կոկաւոր մակերեսութի վերա, և պայծառ արեգակը սփռումէ ջերմութիւն և բերկրութիւն, այլ այն ժամանակ էլ, երբ ամպերը ժողովում դիզվումն և գիշերային խաւար աղջամդջի մէջ մըրիկը շառաչումէ, երկինքը որոտումէ, ալիքները բարձրանումն և անդունք բացվումն՝ որ կլանեն յուսահատուող աշակերին. մինչեւ անգամ և այն ժամանակ, բոլոր զարչուրանց մէջ, հաւատոյ աչքը կարող է տեսանել Փրկչին, որ փառահեղապէս գալիս է ջրերի վերայով և գարերաց գլորդումի մէջ կարող է լսելի լինիլ ՚Նորա վեհափառութեամբ եւ սիրով զեղուն հեղահամբոյր ձայնը. „Ես եմ, մի՛ վախենաք:”

Ո՛հ, երանի՛ թէ կարողանայինք մեք պարզապէս տեսանել Փրկչին մեր ամեն փորձութեան մէջ: Երանի՛ թէ՝ կարողանայինք օտար պատճառներ չտեսանել եւ անձնատուր լինէինք մեր Տիրոջ ակնածութեան. Տըրառունջք եւ գանգատք վերջ չեն ունենալ, եթէ սկսենք ամեն մի բանում պատճառներ որոնել. զորօրինակ ՚Եթէ ես այսպէս ա-

րած չլինէի, — եթէ ես իւլօք լինէի, — եթէ այս ինչ մարդը այսպէս անհաւատրիմ եւ ինքնասէր չլինէր:” Քանի՛ բանի՛ անբաւականութիւններ են բերում իւրեանց ետեւից այս սուտ գատողութիւնները: Ի՞նչ քան գժուար է մեզ հնաղանդիլ երբ մեր նեղութիւնները ընծայումենք մեր կամ այլոց սիալանաց:

Թող քննենք մտադրութեամբ այս առարկան: Փրկիչը ուղարկումէ փոթորիկ: Եթէ ՚Նա է ուղարկում այս փորձութիւնը, կարո՞ղ եմ ես անհնաղադ լինիլ ՚Նորա կամացը: Եթէ ՚Նա է ուղարկում այս արտմութիւնը, կարո՞ղ եմ գժգոհ լինիլ: Եթէ ՚Նորան հաճոյ է տալ ինձ այս հիւանդութիւնը, պիտի չկրե՞մ համբերութեամբ: ՚Նա առաւ ինձանից նորանց, որ ես սիրումէի եւ առանց նոցա աշխարհը երեւումէ ինձ մի անշեն անսպաս, կարո՞ղ եմ տրտնջել, թէպէտ արտասուքս չեմ կարողանում պահել: Եթէ ՚Նքն է լցնում իմ բաժակը, կարո՞ղ եմ ըսմպել: Զպիտի՞ հաւաստի լինեմ՝ որ այն բաժակը իմաստութեամբ է պատրաստուած եւ թէ իմ կեանքս եւ բաղդաւորութիւնս կախուած պիտի լինեն այս ըմպելիքից, թէ որքան դառն էլ մուի նա:

՚Վեք կամ չենք տեսնում Տիրոջը փո-

թորիկի ժամանակ, կամ սխալ հասկացողութեան մէջ ենք 'Առա վերա, ահա այս տեղ է վախի եւ զարհութանաց յորդ ալբիւրը: Վ.յն ժամանակ ամեն մի ամպի մէջ երեսումէ մեզ թշնամի, — փոթորիկի շառաչ ման մէջ լսելի է լինում սպանողի ձայն:

Վ.յն՝ սնապաշտութիւնը աղբիւր է վախի, որովհետեւ ճանաչում չէ այն միակ պատճառը, որ արժանի էր մեր խորին յարգութեանը: Վ.եծ ճշմարտութիւն կայ Առօնմանի խօսքերի մէջ. թէ „Տիրոջ վախի մէջ հաստատ վասահութիւն կայ և 'Առա որդիքը ապաւէն պիտի ունենան:” Եթէ մեք վախումնք ճշմարիտ Վ.ստուծուց, պիտի ուրիշ վախ չունենանք: Ո՞վ կարող է չարիք հասուցանել մեզ, երբ 'Ա, ա — մեր պաշտպանն է: Ո՞ր թշնամուց պիտի վախենք, երբ 'Ա, ա — մեր Վ.ստուծն է: Կարո՞ղ է փոթորիկը վախեցնել մեզ, երբ Փրկիչը մեր ապաւէնն է, և կարող է հողմերին և ալիքներին մեր համար իւր բարերարութեան գործիք շնորհ: Վ.եք կարող չենք թագնուիլ կեանքի փաթորիկների երեսից, բայց այս փոթորիկները չունին զօրութիւն ոչ միայն վնասելու, այլև և վախեցնելու անգում նոցա որ լսումն Փրկչի ձայնը. թէ „Ես եմ, մի վախենաք:” Վ.շակերտաց վախը բոլորովին ցրուելու համար,

Փրկիչը ասումէ. "Ես եմ," ինաւական էր հասկացնել թէ նա — Ինքնէ, — 'Առա ներկայութիւնը եղաւ ամենածիշգ երաշխաւորութիւն նոցա աղատութեան: Եւ այս հաւասացնելը. թէ „Ես եմ” արգեօք պարունակում չէ իւր մէջ ամեն բան, որ կարող էր ցրուել թշուառ քրիստոնէի երկիցը և քաղցրացնել նորա շարշարանքը: 'Ա, ա զօրութեան ձայն էր՝ նորա ձայնը, որուն տված է ամեն իշխանութիւն երկինքի և երկրի մէջ. Արուն հնազանգումն բոլոր բնութեան զօրութիւնքը և Արը իսկոյն յայսնեց իւր իշխանութիւնը, գնալով ծովի վերա: 'Ա, ա էր ձայնը այն Եսութեան, որ կարող էր առնել ամեն բան, ինչ որ անհըրածեց էր իւր աշակերտաց ապահովութեան համար: Փոթորիկը կարող էր լինիլ սաստիկ, — բայց նա գիտէր նորան հանգարտեցնելու եղանակը: Վ.իքները կարող էին լինիլ զօրեղ, բայց 'Ա, ա, որ քայլումէր նոցա հպարտ գագաթների վերա, կարող էր գագարեցնել նոցա կատաղութիւնը: Ո՞րով բանիւ, նա կարող էր կամ հանդարտեցնել փոթորիկը, կամ պահպանել իւր աշակերտները փոթորիկից: 'Ա, ոյն իսկ ամենազօրեղ ձայնը հիմա էլ խօսումէ փոթորիկի մէջ: Եւ նա որ ստեղծեց փոթորիկը կարող է և վերա-

ցընել նորան:

Ինչ որ տեսնումնք բնութեան դարերքի
մէջ, կարող ենք տեսնել և ամեն հնարաւոր
թշուառութեան մէջ. Արակը ու կարկուտը,
ձիւնը ու շոգին եւ մրրկալց հողմը նորա
խօսքն են կատարում: 'Ա, ա սահմանեց յաւի-
տենական կարգ, և անփոփոխելի վճիռ տո-
ւաւ: Իրանն է ծովը — ինքը շինեց նորան:
'Ա, ա նորան փականք և դռներ դրաւ և ա-
սաց. մինչև այս տեղ գաս՝ և այն կողմը չան-
ցանես, և քո ալիքներիդ հպարտութիւնը
այս տեղ դադարի: Վրդարեւ, նա՝ որ քամիին
հրամայումէ փել և բարձրացնումէ ալիքներ,
կարող է և փոթորիկը խորին խաղաղու-
թեան գարձնել և ալիքները զսպել: Ուրախ
եղի՞ր ուրեմն ո՛վ վշտակիր աշակերտ, նա՝
որ խօսումէ փոթորիկի մէջ, Ինքն ստեղծեց
նորան և կարող է դադարեցնել: Վ.յն պաշտ-
պանը՝ որ ասումէ. „մի վախենար.” Վ.ստո-
ւած է, Որով ամեն բան ստեղծուեց: 'Ա, որա
խօսքը, որ խօսումէ նեղութեան մէջ լինող-
ներին միահմարելու համար, նոյնպէս զօրեղ
է հիմա էլ, որպէս և այն ժամանակ, երբ
'Ա, ա սաաց լրյու լինի և լրյու եղաւ: Վ.պա-
ուրեմն՝ Տիրոջ համար անհնարին բան կա՞յ:

Ապակայն բաւական չէ ընդունել այս
ձայնը իրբե ամենակարողութեան ձայն. այս

աներկբայութիւնը չվերացնել մեր վախը,
այլ ընդ հակառակը կմեծացնէ: Որովհետեւ
նա՝ որ գոչումէ գէպի մեղ Վ.ստուած է,
Որուն մեք վշտացնումնք մեր մեղքերովը,
եւ նորա կարզութիւնը կարող է պատճել
մեղ: Եթէ Վ.ա կարումէ գաղարացնել փո-
թորիկը — կարող է և հրամայել կայծակին
որ մեղնէ ինձ կամ անդունդին որ կլա-
նէ ինձ: Բաւական չէ դաւանել նորան
Վ.ստուած և բնութեան իշխան խռովեալ սըր-
տին խաղաղութիւն տալու համար: Ո՞ինչեւ
ես հաւաստի շլինեմ թէ նորանից թողու-
թիւն եմ ստացած իմ մեղաց համար — այն
կատարելութիւնները՝ որ յայտնումն նորա
փառքը, պիտի զարհուրեցնեն ինձ, նորա
անհուն մեծութիւնը, անսահման իշխանու-
թիւնը, ամենահզօր կարողութիւնը — այս
ամենը բարձրանումէ իմ մեղաց գէմ: Ուստի
ես պիտի նայեմ Եշովային որպէս շնորհաց
Վ.ստուած և տեսանեմ 'Ա, որան Իւր Որդոյ
մէջ, — և այն ժամանակ միայն կիֆարատի
իմ վախը: Վ.յո՛, նա — Յիսուս Քրիստոսն
է, Եմմանուէլը (Վ.ստուած մեր հետ), որ
գոչումէ. , Եշու եմ:”

Վ.յն ձայնը սիրոյ ձայն էր: Վ.շակերտքը
ճանաչեցին (յետոյ), — Ճանաչեցին իւ-
րեանց միակ Բարերարի ձայնը, Որոյ գութը

միշտ անփոփօխ էր, “Ա.ա կարեկից էր նոցա տկարութիւններին, համբարումէր նոցա թերահաւատութեանը, ցաւակից էր նոցա տըրտութիւններին։” Առքա տեսած չէին նորանում մի այնպիսի գործ՝ որ կնքուած շլինէր իւր սիրովը։ “Առքա օդնութեան կարօտողը չմերժվեց երբէք. չւր ականջը բաց էր միշտ ամեն նեղութեան ձեռից գանգատողի համար։ Վաս ուրեմն նոքա հաւատի էին միանգամայն, թէ նորա կարողութիւնը պիտի փրկէ իրանց։” Այս իսկ սիրոյ ձայնը հիմա էլ գոչումէ. երբ փոթորիկը բարձրանումէ։ Հիմա էլ գոչումէ գէպի մեղ նա որու համար գրաւած է. թէ՝ միշպէս որ մի հայր զթամէ իւր որդոց վերա, այնպէս և Տէրը զթամէ իրանից վախեցողների վերա” (Առաջ. չէ. 13.). միշպէս որ մի մայր միթարումէ իւր մանուկին, այնպէս և ես պիտի միսիթարեմ ձեզ” (Ես իւ. 13.). „մի թէ կնիկը կարո՞ղ է իւր կաթնակեր մանուկին մոռանալ, այնպէս որ իւր որովայնի ծննդեանը վերա չզթայ. թէ և նոքա մոռանան, բայց ես պիտի չմոռանամ քեզ” (Ես իւ. 15.).

Ե.յն ձայնը Խորայէլի միսիթարութեան ձայնն էր, Առքա ձայնը որ օծուած էր Կոտորուած սիրոտ ունեցողներին բժիշկելու

և ամեն սգաւորներին միսիթարելու” (Ես. իտ. 1,2). մեծ Քահանապետի ձայնն էր որ “չարչարուեցաւ մեր տեղ”։” Ա.ա կարո՞ղ էր տալ մեղ իւր սիրոյ մի աւելի յայտնի ապացոյցը, քան թէ գալ չարչարուիլ և մեռանիլ մեր համար, երբ մեք Աստուծոյ թշնամիներ էինք։ Ա.ա փոխեց փառաց բնակարանը աղքատ մսուրի հետ, հրեշտակաց յարգական երկրպագութիւնը մարդկանցից անարգուելու հետ. Նօր հաճութիւնը սատանայից փորձուելու հետ, երկնքի երանութիւնը մեռնելու չափ տրտմութեան հետ Վեթուեմանի պարտիզի մէջ, փառաց աթոռի մեծութիւնը խաչի անպատուութեան հետ և երկնային փառաց լոյսը և պայծառութիւնը գերեզմանի խաւարի հետ։ Ի՞նչ էր ստիպում նորան որ այսպէս առնէր, Ե.յն անհուն սէրը, որով լիքն էր իւր սիրու, այն սէրը՝ որ ապըստամբ մարդկանց վերա էր, որոնք նորան խաչեցին, որոնք հիմա էլ կրկին և կրկին խոցումեն նորան իւրեանց մեղքերովը, — այն սէրը որ հիմա էլ ստիպումէ նորան բարեխօսել մեր համար Աստուծոյ առաջեր։ Ա.ա՝ որ ամեն բան արաւ մեր փրկութեան համար, կլողնէ՞ որ փոթորիկի մէջ կորչինք։ Ա.ա՝ որ չխնայեց իւր միածին Արդուն, այլ տուաւ մեր տեղ մեռնելու, Ա.ա որա

Հետ ամեն բան չպարգևում մեզ:” Ուրեմն՝
պիտի չ փարատին մեր ամեն երկայսութիւն-
ները Փրկչի այս „Ես եմ” խօսքի մօտ:
Վորա ձեռի գայլխոնը ամենակարողութիւնն
է բայց մեք պիտի չվախենք, քանզի այն
ձեռը որ կրումէ նորան, սիրոյ ձեռք է,
ողմերը և ծովը հնազանդումն Վորան, և
այն ձայնը՝ որ կառաւարումէ տիեզերքին,
ասումէ իւրաքանչիւր վշտակիր աշակերտին,
մի՛ վախենար:

Վ.յն ձայնը — որքան սիրոյ, այնքան և
իմաստութեան ձայն է: Կարելի է ասեն.
թէ այն կարողութիւնը որ փոթորիկը հան-
դարտեցնելու զօրութիւն ունի, ի՞նչու է
թողում որ բարձրանայ նա, և թէ այն
սէրը՝ որ համոզումէ մեղ չվախենալ, ի՞նչու
չէ հեռացնում մեզանից նոյն իսկ վախի
պատճառը: Ուակայն այս տեղ է իսկապէս
բացատրվում սէրը, որ նա բարձրացնումէ
փոթորիկը և փոթորիկի մէջ ինքը յայտ-
նըլումէ մեր մօտ: Ա իշտերը ապացոյց են
մեծագոյն սիրոյ, այո՛ իմաստուն ձօր սիրոյ,
որ չուշացնում պատիժը, երբ բարուք
է համարում իօր որդոց համար: Վ.յն սէրը՝
որ իմաստութեամբ չէ կառաւարվում շատ
անգամ կորուստ է պատճառում նորան որ
իրանից օգուտ էր քաղում: Վ.յնպէս չէ

Փրկչի սէրը նա տալիս է միայն այն՝ ինչ
որ գործակից կլինէր հաւատացելոց ձշմարիտ
բարելաւութեանը: Վստուծոյ սէրը կատա-
րեալ է ամեն բանի մէջ: Վագա ումեմն նոյն
իսկ նեղութունները լաւ չեն, երբոր քա-
կելով մեր երկրաւոր կապանքները, թողու-
մեն մեր հոգուն իւր բալոր փափազներով
սրանալ (թռչել) գէպի միայն Տէրը: Փո-
թորիկը անգին բարերարութիւն չէ, երբ
քարշում տանումէ մեղ՝ որ Փրկչի հետ միացը-
նէ: Եթէ հանդարտ և պարզ եղանակում
մեք լինումնք ցուրտ և մոռանում մեր
Վստուծածային բարեկամին, ապա պարտաւոր
չենք փառաբանել նորան այն մասին, որ
փոթորիկի միջցով բացումէ մեր աչքերը,
այնպէս՝ որ կարողանումնք լերջապէս տե-
սանել նորան, երբ նա յայտնվումէ մեղ՝
բացումէ մեր ականջները, այնպէս՝ որ լսելի
է լինում Վորա ձայնը: Ուրեմն ամենածանր
փորձութիւնները պիտի շամարենք իրեւ
նորա թանգագին պարզները, երբ նոքա
գործակից են լինում մեղ՝ որ յայտնապէս
տեսնենք մեր Փրկչին և սերտիւ (սըլս)
միանանք իւր հետ:

Փրկչը իմաստում՝ որ հարկաւոր են մեղ
փորձութիւթիւններ: (Ճէպէտ գէպի փառքը
տանող ճանապարհի վերա ուրախութիւն և

քաղցրութիւն շատ կան, բայց նա յայտնելէ, թէ մեք պիտի սպասենք փոթորիկների: Աշխարհի մէջ նեղութիւն պիտի ունենանք՝” (Յակ. չը. 33.)։ Ի՞ոյոր սուրբերի փորձութիւնները ամեն գարերի մէջ ցոյց են տալիս, թէ միայն տրամութեան և արտասուաց ճանապարհն է՝ որ տանումէ գէպի այն երջանիկ հայրենիքը, ուր ամեն արտասուք պիտի սրբուի մեր աչքերից: Ընէ այս պէս և թէ այն պէս մեք պիտի պատրաստ գտնուինք նեղութեան համար, որովհետեւ փորձութիւններ պիտի ունենանք: Վոքա որ նեղութիւն չունեն ազատ են նորանից փոքր ժամանակ միայն: Խորին հանդարտութեան մէջ պատրաստվումէ փոթորիկը: Ի՞ոյց որքան խաւարը եւ աղջամուղջը զսրհուրելի լինին եւ ալիքները ահարկու երեւին, նոքա չեն նշանակում Քրիստոսի բարկութիւնը, այլ միայն ցոյց են տալիս նորա իմաստնագոյն սէրը: Կա յօժար կամօք չէ ուղարկում նեղութիւն մարդկանց որդիների համար: Եթէ հարկաւոր չլինէր փորձութիւնը ամեներին չէր ուղարկուիլ: Ի՞ոյց՝ ափսոս որ մեք միշտ կարօտութիւն ունինք փորձութիւնների, թէպէտ եւ չենք զգում այդ կարօտութիւնը: Փորձութիւնները յիշեցնումեն մեզ, թէ մեր հայրենիքը այստեղ չէ: Եթէ չհա-

դիպէինք փորձութիւնների մէր ճանապարհի վերա: Հեշտ կարող էինք մոռանալ այն լաւգոյն աշխարհը՝ ուր որ ուղղած ենք մեր ընթացքը: Ճ'անապարհի դժուարութիւնները ամեն ժամանակ յիշեցնումեն մեզ, թէ այս աեղ մեք պանդուխտ և օտարականներ ենք: Ես սեղ սովորումենք ճանաշել մեր ունայնութիւնը եւ երկրաւոր բարեաց անհաստատութիւնը: Օրկանքները առնելով մեր հոգին աւելի զգալուն, ստիպումեն մեղեռանդուն կերպով խնդրել Եստուածային Ախիթարչի օգնութիւնը եւ բարձրացնել մեր աչքերը գէպի լիոը՝ գէպի այն տեղ՝ ուր մեր ծշմարիտ ապաստանարանն է:

Հաւատքը ամրանումէ փորձառութեամբ: Դողոր քրիստոնէական բարեգործութիւնները աւելի հաստատութիւն են գտնում վարժութենով: Ուստի և Պօղոս առաքեալը սովորցնումէ մեզ. թէ „նեղութիւնը համբերութիւն է գործում. համբերութիւնը փորձառութիւն և փորձառութիւնը յայս” (Հոռ. է. 3-4): Եւ Յակոբոս առաքեալը ասումէ. „Յզրայրներ՝ բոլորովին ուրախութեան արժանի բան համարեցէք, երբոր կերպ կերպ փորձանքների մէջ ընկնիք, գիտենալով որ ձեր հաւատքի փորձառութիւնը համբերութիւն է զործում” (Յակ. առ. 2:3): Կամապէս

և Պետրոս առաքեալը քաջալերումէ հաւա-
տացեալներին դէպի համբերութիւն և միսի-
թարութիւն տրտմութիւնների մէջ, բացա-
տըրելով այսպէս. „Որպէս զի ձեր հաւատքի
փորձառութիւնը՝ (որ կորստական ոսկիից աւե-
լի պատուական է, թէ և նա կրակով է փորձ-
վում) գտնուի գովութենով ու պատուվ և
փառքով ջիխուս Քրիստոսի յայտնուելու
ժամանակը” (ա. Պէտ. ա. 7):

Հազիւ կարելի է զգալ փոթորիկի ամեն
արկասաւոր ներգործութիւնները, մինչ դեռ
նա շարունակումէ: Ո՞ւր հոգին այնպէս
կշփոթուի վախից, կընկղմի տրտմութեան
մէջ, և այնպէս զօրութիւնից կընկնի տկար
մարմնոյ նեղութիւններով. որ նոյն ժամանակ
կարով չէ և զգալ նորա բարերար հետե-
անբները: Ուստի՝ մեզ քաջայերելու համար
ասումէ առաքեալը. „ամեն խրատ նոյն ժա-
մանակ ուրախարար չերեւում, այլ տրտմա-
կան. բայց յետոյ արդարութեան խաղաղա-
րար պառզն է հատուցանում նորանով վար-
ժուողներին” (Եշթ. էթ. 11): Ճ'իշտ այս-
պէս փոթորիկի ժամանակ, այն հողմի ամե-
նի կատաղութիւնը, որից նաւորդը զարհու-
րումէր՝ որպէս թէ նա կորուստ էր սպառնում
իւր նաւին, շատ ժամանակ յառաջ է մղույ
նորան ամենասրընթաց կերպով և հասացնում

իւր նպատակին: Վ.յս կարելի է և աննշմա-
րելի լինի փոթորիկի ժամանակը, բայց
յետոյ երբ երկինքը պարզումէ և կարելի է
լինում կարեոր նկատողութիւններ անել,
շատ անգամ տեսնումն, որ նաւը մի փոթո-
րիկ գիշերի մէջ անցած էր անհամեմատ տա-
րածութիւն քան թէ պիտի անցանէր քանի
մի հանդարտ և պարզ օրերի մէջ: Ո՞ի և
նոյնը պատահումէ և այն փոթորիկներին որ
յարձակվումն հաւտացելց վերա: ՚Նքա
շատ շուտ են յառաջ մղում նորան և հասա-
ցընում իւր ցանդալի նաւահանգստին. և թէ-
պէտ նոյն ժամանակ, երբ հողմերը շառաչու-
մէին և ալիքները խորտակվում նորա շուրջը,
նա կարող էր ասել. թէ ամեն բան բարձրա-
ցած է իմ զէմ. բայց յետոյ, յայտնագոր-
ծումէ շնորհակալութեամբ սրտի, որ այն
հողմերը, որոնցից ինքը վախումէր շատ են
յառաջ մղել իրան իւր ճանապարհորդու-
թեան մէջ և թէ այն ալիքները, որ ըստ
երեւութին պէտքէր կլանէին իրան, մօտացը-
րել են երկնքին:

„Ես եմ!” Հետևանքը ցոյց տուաւ, թէ
նա Փրկիչն էր: Շատ մարդիկ՝ յետոյ՝ ա-
մեն դարերի մէջ կրկնեցին սաղմոսերգուի
խօսքերը. թէ ՚աւ եղաւ ինձ՝ որ վշտա-
ցայ” (Ասու. չէթ. 71): ՚Այս և մեզանից

այս էռովում Տէրը՝ Վասն զի Տէրը իւր սիրածին խրատումէ, և ձեծումէ ամեն որդին որ ինքը ընդունումէ: Ձէ որ խրատի համբերէք, Վստուած ձեր հետ՝ որպէս թէ որդիների հետ կվարուի.” (Եշ. Ք. 6-7): Մանուկները հաղիւ թէ օգուտ են տեսնում ուսումից՝ նոյն իսկ ուսումնառութեան ժամանակ, այլ ընդ հակառակը, շատ խօսութիւն էլ հշամարեն, երբոր նորանց զրկումն իւրեանց զուարձութիւններից կամ ստորագրումն սաստիկ կանոնի տակ, կամ թէ երբոր ստիպումն դառն ըմպելիք ընդունել հիւանդ ժամանակը: Ի՞այց ծնողական խոչեմ սէրը հարկադրումէ մեղ առ ժամանակ կրել այս տհաճութիւնը, որպէս զի առնէր մեղ միշտ բարեբառդ: “Ծնողքը երբեմն կարող են սիսալուիլ, իսկ երկնային շայրը ոչ երբէք: Խնչ որ ՚Նա առնումէ միշտ մեր օգտի համար է: ՚Նմեն բաները բարիի գործակից են լինում նոցա որ սիրումն Վստուծուն” (Հառով. ը. 28): Ուրեմն չըտրոնջենք փոթորիկ պատահած ժամանակը: Կարելի՞ է լինիլ երախայ՝ չպատժուիլ, լինիլ ոսկի՞ չփոթուիլ լինիլ քրիստոնեայ չը շարչարուիլ:

Խնչպէս մօրենին, որ տեսաւ Առվլսէս Քարեր լեռան վերա, չէր այրվում, թէ և

կրակով վառված էր, քան զի Տէրը այնտեղ էր. և ինչպէս երեք մանկունքը. Ոեղրակ, Ախսաք և Վբիդնագով գուրս եկան բորբոքած կրակի հնոցից առանց այրուելու, վասն զի Վստուծոյ որդին ինքն այնտեղ նոցա հետ էր, ճիշտ այսպէս և այն տառապաքները, որ կրումէ քրիստոնեան, չեն կարող մօտենալ նորա գլխի մազին անգամ: Առք կարող ենք տանել ամենագառն փորձութիւնների, սակայն պիտի յիշենք, որ հալոցը վառած է, ոչ թէ մեղ սպառելու, այլ սըրբելու համար: ՚Նւ „պիտի նստէ” ասումէ մարգարէն Վստուծոյ համար „ոսկիի պէս և արծաթի պէս պիտի զտէ” (Առու. Դ. 3): Երբոր ոսկերիչը գցումէ թանգագին մետաղը կրակի մէջ, մի՞թէ մոռանումէ նորան այնտեղ: Ո՛չ նա մեծ խնայողութեամբ հսկումէ նորա վերա: ՚Նքը նստումէ հալոցի մօտ բոլոր ժամանակը և ուշի ուշով նայումէ և երբ տեսնումէ որ իւր պատկերը անդրագարձած է հալուած ոսկու մէջ, հսկանումէ՝ թէ փորձը վերջացած է և իսկոյն կրակը անցուցանումէ: ՚Նա մանապէս հսկումէ և Փրկիչը այն տառապանքների հալոցի վերա՝ ուր քրիստոնեաները պիտի սըրբուին, ՚Նա թոյլ չէ տալիս որ ’ի զուր լինի մի փոքրիկ նեղութիւն անգամ, և սպասումէ միայն՝ որ իւր պատկերը

ցոլանայ նոցա սրտի մէջ, Եւ նորա որդիքը
դուրս պիտի գան այնտեղից եօթն անգամ
մաքրուած արծաթի պէս:

ԱՎՎՀ կրաժանէ մեղ Քրիստոսի սիրուցն տա-
ռապանք, կամ նեղութիւն, կամ վտանգ, կամ
սո՞ւր" (Հառվ. ը. 35): Եւ հենց նոքա են
որ միաւորումն մեղ Քրիստոսի հետ: Ո՞ք
ոչ միայն մնումք անյաղթ, այլ լինումք յաղթող, այս ամեն բաների մէջ էլ աւելի
յաղթող ենք լինում Կորանով՝ որ սիրեց
մեղ" (Հառվ. ը. 37): Լինումնք յաղթողից
էլ աւելի՝ պատճառ ոչ միայն պատերազմի
դաշտը մեր յետում ենք թողում, այլ դուրս
ենք գալիս պատերազմի մէջիցն բոլորովին
առողջ և էլ աւելի նորոգուած ուժով: Հաղ-
թող համարվում նա՛ որ վճռողաբար կանդ-
նած յարձակմոնքի դէմ գարձնումէ իրանից
ամեն մի հարուած և պահումէ իւր անձը
անվնաս և վերջապէս՝ ինչքան էլ սաստիկ
լինէր պատերազմը, յաղթումէ իւր թշնամին
և զինաթափ առնում նորան: Իսկ եթէ վե-
հանձն ձեռքով բարձրացնումէ նա իւր վի-
րաւորածին և բաւական չհամարելով այն
միայն՝ որ զինաթափ էր արած նորա մար-
մինը, հոգումէ որ նորա հոգուն ևս յաղթէ
իւր սիրով՝ որով նա ստանումէ առաւել քան
հասարակ յաղթութիւն: Կուածելով թըշ-

նամին նա լինումէ յաղթող, բայց չինելով
թշնամից բարեկամ, լինումէ առաւել քան
յաղթող:

Ա. յապէս է լինում հաւատացելոյ յաղ-
թութիւնը: Այն փորձութիւնները՝ որ գա-
լիս են նորա վերա, ոչ միայն զուրկ են իս-
կական վնաս տալու զօրութենից, այլ ընդ
հակառակ նոքա կարող են լինի ամենազօրա-
ւոր գործիք նորան փրկելու, միսիթարելու և
զօրութիւն տալու համար: Որքան զարհու-
թի էլ երեխն նոքա և որքան ահարկու
լինի նոցա ժամանաւմը, 'ի վերա այսր ամե-
նայնի նոքա իրապէս գրաւականներ են Վատու-
ծոյ մեծագոյն բարերարութեանց: Հեռուից և
մեր վերա հասանելու ժամանակ երեսումն
նոքա որպէս թշնամիք, բայց երբոր Քրիս-
տոսի զինուորը գիմաւորումէ նորանց ինչպէս
իւր մտերիմներին, ապա այն զէնքերը՝ որ
կարծվումէր թէ ուղղված էին իւր դէմ պա-
տումն նորա չորս կողմը, սրպէս թէ վա-
հանով, թշնամիները հաշտութեան դաշինք
են կապում նորա հետ և այս կերպով, նա
աւելի յաղթող է լինում Կորանով՝ որ սիրեց
իրան:

Այն հաւատը՝ որ ամեն գիպուածում
տեսնումէ Փրկչին, Ճիշտ մի այնպիսի հրա-
շագործ զօրութիւն է, որ ամեն բան կարող

էր ոսկիի գարձնել։ Այի բան որքան էլ չնշին լինէր նա, թէ և վնասակար անդամ թռէր՝ հաւատացելը մօտ գառնումէ թանգագին գանձ։ Այն իսկ փորձութիւնները եւ ծանր տառապանքը դառնումեն նորա համար բոլոր ստացուածքից պատուական։ Ամեն բան ձերն է՝ ասումէ Գլողոս առաքեալը, թէ մահը, թէ աշխարհը, թէ կեանքը, թէ մահը, թէ ներկայ բանները, եւ թէ ապագաները ամեն բան ձերն է՝ (ա. Արք. Գ. 22)։ Արդիկ շահ չեն համարում առ հասարակ կորուստները, բայց ճշմարտապէս շահ են նոքա նոցա համար, որ Քրիստոսինն են։ Ճշարհիս ձախորդութիւնները եւ վնասները նոյնպէս եւ հաճոյքները, կեանքիս տրտմութիւնները, կամ ուրախութիւնները, աղետալի բաժանմունքը եւ մօտեցող մահուան սարսուաը (սարսափի) նոյնպէս եւ երկնային հրաւէրը, ներկայիս փոթորկը եւ պատերազմը, հանդերձեալ խաղաղութիւնը եւ հանդիսոր, ամենը — ձերն է։ Եթէ մեք խոհեմ լինէինք, չէինք ուզել զրկուիլ մեր ստացուածքի ոչ մեկից, պատճառ՝ ո՞վ կըսիրէ վնաս աննել։ Եթէ մեք իրերին այնպէս նայէինք, ինչպէս նայումէ Տէրը, կտհունէինք՝ որ այն ամենը ինչքան շատ են ծառայում մեր օգտի համար։ Եւ թէպէտ

մեք գնումենք հիմա հաւատքով և ոչ թէ երկողյամով ուրեմն պիտի աներկրայ չլինէնք հետեանքի մասին, երբոր Տէրը բացումէ նորանց մեր համար, այնքան յայտնի կերպով որպէս թէ մեք ինքնին տեսած լինէինք բոլոր իրերի ընթացքը։ Ուրեմն փոթորկիները մեր համար են։ Բայց քեզ շարիք պատի շհասնի, և քո բնուկարանիդ հարուած պիտի շմօտենայ» (Ոտք. զ. 10)։ Ահա ճշմարիտ խոստուօնիք որ իւր ամենա բնդքարձակ նշանակութեամբ կատարվումէ նոցա վերա, որ ապրումեն Տիրոջ առանձին պաշտպանութեան տակ։ Այցա համար տառապանքը շարիք, և հիանդութիւնը պատիմ չեն։ Վմենակարողի հովանաւորութիւնը տարածուելով նոցա չորս կողմով որ իւրեանց ապաստակը այս աեզ են ինքրում, փոթարկումէ այն ամեն իրերի յատկութիւնը որոց վերա աղջեցութիւն ունի։ Ուրախութիւնները դառնումեն զուտ ուրախութիւններ և նոյն իսկ փորձութիւնները փոխարկվումն ուրախութիւններ կամ կարեկը զանում ամենագայծան ցերեկ և նոյն իսկ գիշերը փոխարկվում ցերեկի։ Այս տեղ և կայծակը, որ մահ կսպանայր մի ուրիշ տեղ, ոչ միայն յայտնվումէ իւր փայլուն լուսովք և լուսաւորում հաւատացելոց ճանապարհը, այլ

և ներկայացնումէ այն ճանապարհը իւր փառաւոր զեղեցկութեամբը. և թունաւոր վասկը հոսելով այս տեղ, ոչ միայն կորցնումէ իւր վնասակար յատկութիւնները, այլ և պողոյտ գալով հաւատացելոյ շուրջը տալիս է նորան զովութիւն, ամրութիւն և բժըշ կութիւն:

Վ.յոպէս՝ փոթորիկը երեսումէ միայն զարհութելի: Հոդմերը և կոհակները՝ բաղիսելով նաւին ոչ միայն խորտակում չեն նորան, այլ ևս աւաել ամրացնումնն և առնումն ըղոծնակ կրելու ովկիանոսի րոլոր ալէկոծութիւններին: Դառվագնացութիւնը նորանով յինումէ ևս առաւել յաջողակ և նաւահանգիստ մտնելու աւելի հանգիսաւոր: Քանզի ձեզ առատօրէն պիտի շնորհուի մեր Տէր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի յախտենական թագաւորութիւնը մտանելու” (Ը. Գլուխ. ա. 11): Փորձութիւնները թնդին ախորժելի չեն. բայց նոքա դաւումն անգին բարերարութիւնք, երբ գալիս են Երկնաւոր Հօր ձեռից: Ո՞ք իրաւամբ կասենք այն ամեն Վատուծոյ որդիների համար, որոնք հիմա փափի մէջ են, — թէ Տէրը տարաւ նորանց ուղիղ ճանապարհով իւր բնակութեան քաղաքը: Վ.յդ ճանապարհը շատ ժամանակ եղած է քարքարութ, մութ,

ճածուկ և մրրկալից, բայց միշտ եղած է ուղիղ ճանապարհ: Լա հիմա էլ մի և նորն է: Ո՞ք կտեսնենք որ մեր ճանապարհը անցնումէ երրեմն արտասուաց ձորովը: Եւ եթէ մեք պատուհենք նորանում որ և իցեւ տառապանքի և գժււարութիւնների, այսու ամենայնիւ ուղիղ ճանապարհ է նա, որովհետեւ մեր ամենաբարի և ամենիմաստ երկնաւոր Հօր ցոյց տուած ճանապարհն է: — այն ուղիղ ճանապարհը որ առաջնորդումէ զեպի Եւր բնակարանը: Վ.մեն մի քայլափոխ անհրաժեշտ է մեզ այդ երկնաւին բնակարանին մտածնելու: Եւ ինչ պայծառ առաւօտ պիտի լինի բանի մի ժամ մուժնից ետև՝ որոնց մէջ մեք ալէկոծութիւն կրած և վաստակած էինք թիավարելով ներհակ քամիների պահառաւ: Վ.մրոյջ զիշերը կարելի է արտասուք թափել, բայց հանդիսաւոր երգը կըդիմաւորէ առաւօտուն: Վ.յո՛ զարհուրելի փօթորիկի մէջ, Փրկիչը ամեն բան մեր օգտին ուղղելով, պահանջումէ՝ որ մեք շվախենք ոչ մի բանից: Լա ասումէ, .լիս եմ, մի վախենաք:”

Ո՞ի և նոյն ժամանակ՝ այն ձայնը՝ որ լսումնք մեք փոթորիկի մէջ, նորա ձայնն է, որ Ինքն էլ ալէկոծութեան հանդիպեց, Վ.նքն էլ մի ժամանակ մորտիրոսուեց այն-

պիսի նեղութիւններ կրելով, որ ոչ ով իւր
աշակերտներից կարող չէր կրել: Անք ընկ-
նում չենք մի այնպիսի փորձութեան մեջ,
որ ամեննին յայտնի չւնելը նորան: Առան-
յայտնի են մարմին նեղութիւնները: Նո-
րան մի գլուխ դնելու տեղ չունէր: Ա, ա
անօթեցաւ, շարչարուեց և խաչի անպատու-
ութիւնը կրեց: Ա, ա անարգուեց և մարդ-
կանցից մերժուեց: Առա յատուկ բարեկամ-
ները թողեցին իրան և փախան: Տէրը հա-
ճեցաւ բեկանել նորան: Առա հոգին տրբա-
մած էր մինչև 'ի մահ: Ա, ա սաստիկ տագ-
նապեց և ազօթք արաւ արիւն քրտունքի
մեջ: Ա, ա խաչի վերա աղաղակեց Ա, Ասու-
ած իմ՝ Ասուած իմ՝ ինչո՞ւ թողիր ինձ:

Ա, յու շարչարանքը և փորձութիւնները
խկապէս էին: Ա, յն փոթորիկը որ խորտա-
կուեց Ա, որա վերա՝ երեակայական չէր:
Պատերազմը միոյն երեսյթ չէր: Ա, ա ա-
ռանց մեղաց էր, բայց մեղքի դէմ պատերազմ
ունէր և յաղթեց մղքին, ոչ թէ ար-
գելք չկար նորա համար յաղթեց, այլ որ
իւր հոգու մէջ գտանվումէր մի գերազոյն
սէր դէպի իւր այրը: Ա, որա քաղցածու-
թիւնից նուազիլը անապատում իրական նե-
ղութիւն էր: Խաչի շարչարանքը իսկ և
իսկ կրեց: Ա, ա, այնպէս որ բնութիւնը

սկսեց սասանիլ նոցա առաջեւ, սակայն չօք
կամաց հնազանդիլը աւելի զօրաւոր էր: Ա, ո-
րանում քան ամեն չարչարանք: Պատերազմը
երկիւղալի էր, և այս պատճառաւ գրուած:
Է թէ նա ամեն կերպով փորձը առած է մեր:
Նաև: Զկոյ այն աստիճան տառացանք: Ա,
այնպիսի պատերազմ որ Ա, ա կրած չլինի:
Ոչ մի նաւի վերա փշած չէր երբէք մի
այնպիսի սաստիկ քամի, եղած չէր երբէք և
այնպիսի մութն զիշեր և բարձրացած չէին:
բնաւ այնպիսի արիբներ՝ որպէս այն ժամա-
նակ, երբ նա փոթորիկի մեջ էր:

Ա, յու աղու և զօրաւոր մխիթարութիւն է,
տու վուճաշակերտին: Փրկիչը փորձը առած է
կարեկից լինելու մեզ մեր թշուառութիւնների
մէջ: և Ա, ա կարող էլ է փրկել մեզ նոցանից:
Ա, որա շարչարանքը ճշմարտապէս էր: — և
այս պատճառաւ մեք մէնակ չենք շարչարվում:
Ա, ա կրումէ մեր հիւնդութիւնները: Ա, յու
պիսի քաջալիրութիւն է այս, որ մեք պիտի
յուսով գիմնք շնորհաց ամուսին ողորմու-
թիւն խողրելու և օգնութիւն գտնելու պէտք
եղած ժամանակը, երբոր գիտենք թէ ու-
նինք մեծ քահանայապետ՝ որ կարող է կարե-
կից լլինիլ մեր ակարութիւններին: Ա, յն
սեղութիւնները որ Ճնշումն մեզ՝ ծանրացած
էին Ա, որա վերա մեծ զօրութեամբ: Ա, յն

Թշնամիները որոնց հետ մեք պատերազմու։
մենք մեծ կատաղութեամբ յարձակուած էին
Դորա վերա։ Ո՞նք միայն ճաշակն ենք առ-
նում այն դառն գաւաթից՝ որը ՚Նա մինչեւ
վերջին կաթիւ խմեց։ Ո՞նք վերա լնկնումէ
միայն նուռազագոյն մասն այն փաթորիկց՝ որը
իւր բոլոր զօրութիւնը սպառեց՝ նորա վերա։

Այդ՝ եթէ նա՛ այն սուրբը, անմեղը
եւ անարատը չթագցրուց իւր անձը փաթո-
րիկի երեսից, պէտք է մեզ զարմանալ կամ
գանգատել երբոր ենթարկուած ենք փաթո-
րիկի։ Ո՞նք մէջ շատ խառնուրդ կայ, որ
պէտք է բնաջինջ առնուի, բայց նորանում
բնաւ եղած չէ այդ։ Եթէ նա շարշարուեց
ոչ իւր՝ այլ մեր տեղ, ապա մեք արտնջենք
երբոր շարշարվուենք մեր տեղ։ ՚Նա օրհնեց
շարշարանաց ճանապարհը իւր ոտաց շաւիղ-
ներով եւ սորանով տուաւ այդ ճանապարհին
մի առանձին արժանաւորութիւն։ Խնչպէս որ
նորա ճակատը վիրաւորող փուշիրը ձեւացը-
նումէին պսակ, նոյնպէս եւ շարշարանաց մէջ
կայ մի այնպիսի վսեմութիւն, որ նորան
կարող չէ տալ մեզ ոչ մի երկրաւոր ուրա-
խութիւն։ Խնագաւորաց թագաւորը տառա-
պանաց թագը զրաւ իւր գլխին և յայտնուեց
աշխարհի մէջ ինչպէս մարտիրոս՝ օտար ա-
մեն ուրախութենից։ Թօդ ուրեմն մեք ուրախ

Ենենք երբ այս բանում նմանումնք մեք
Տիրոջը։ Շառան պէտք չէ որ մասնակից
լինի իւր Տիրոջ վիճակին, Եթէ նա պատա-
հեց փ թորիկի, ապա մեզ վոյել է փափա-
գիլ խաղաղաւէտ հանգստութեան։ Ռարի
է մեզ միշտ ՚Վրիստոսի հետ լինիլ։
Ռողոր հաճոյքները՝ ուր չէ ՚Վրիստոս դառն
են ՚րան սիրող հոգուն, իսկ նորա քաղցր
Ներկայութիւնը առնումէ թանգագին նոյն
իւկ տրտմութիւններին։ Ո՞նք ցանկանումէ
նմանիլ իւր առարկային, ոչ միայն այն բա-
նում որ հաճելի է, այլ նորանում եւս որ
անախորժ է։ Երբոր խնդրումէին Փրկչին
որ թագաւոր անեն, ՚Նա թագ կացաւ, իսկ
երբ սկսեցին խնդրել նորան՝ որ ՚ի խաչ
հանեն. նա յօժարութեամբ տուաւ իւր
անձը շարշարովների ձեռքը։ Այդ փասխէնք
այն փորձութիւններից, որ ուզարկում է
նա։ Վնքը շանցաւ մեր առաջեկց, չ'թե-
թևացուց ամեն բան եւ քաղցրացրուց.
՚Նա չ'քաղցրացրուց աղքատութիւնը, հալա-
ծանիք եւ նոյն իսկ մահը, եւ գերեզմանը
հանդըստեան տեղ շարաւ։

՚Ղա եւ։” Փրկիչը գարձնումէ մեր ու-
շաղրութիւնը իւր վերա։ ՚Նա շասում՝ հան-
դարտ կացէք. դուք հնարագէտ, զօրել եւ
հոգերուզ էք եւ բոլորովին կարող նուաճել

կոթորիկին. այլ ասումէ՝ քաջ եղիք, Այս
եմ, մի վախենաք:” Ուստի զեկը լինի կորած,
առագաստները պատառութված, նաև առանց
կայմի եւ խորտակուած, բայց երբ փրկիչը
ասումէ՝ „Ես եմ.” մեք չենք կորչել
ալիքների մէջ: Ոչ մի բան կարող չէ
վնասել մեզ, երբ մեք նորա հետ ենք եւ
ոչ մի բան կարող չէ փրկել երբ առանց
նորան ենք: Ո՞ի մանուկ Քրիստոսի հետ
կարող է բոլոր տիեզերքը կառաւարել, բայց
կարողութիւնը կպատկանէ Քրիստոսին եւ
ոչ մանուկին:

Աշխարհիս ամբարտաւանութեան համե-
մատ, մեք կըկամենայինք ամենը ինքներս
անել, իբր թէ մեր ջանքերը կարող էին
փրկել մեզ բայց Փրկիչը ուզումէ ցոյդ տալ
մեջ՝ որ մեր աշխատութիւնը ՚ի զուր են
առանց իրան: Խասակիչ հրեշտակը Եգիպ-
տացոց անդրանիկներին կոտորելու ժամա-
նակ Խարայէլացոց տների վերայից անց էր
կենում, եւ անզօր մանուկը այ քան ապա-
հով էր, որքան եւ զօրել տղաւարդը, մի-
այն եթէ նոցա գոների վերա լինէր արիւ-
նի նշան: Եյնպէս էլ Քրիստոսի արիւնը
միմիայն եւ կատարեալ փրկութիւն է մեր
համար: Երբ Փրկիչը նաւի մէջ էր, Խար-
աշկերտների հետ նոցանից ամենատկարն

էլ այն քան հանգիստ էր՝ որքան եւ ամենից
զօրեղն, քանզի նոցա ամենի ապահովութիւնը
կախուած էր մի եւ նոյն պատճառից: —
Տիրոջ ներկայութենից: Կանապէս, եթէ
եւ մեր հետն է Տէրը փոթորիկի ժամանակ,
պէտք է խողաղ եւ հանգիստ լինինք: քան
զի մեր ապահովութիւնը նորանիցն է:

“Ես եմ.” Թէ ինչքան անարժան էլ լինինք
մեք: Եւ ինչքան տկար լինի մեր հաւատը.
Քրիստոս է մեր ազատութիւնը, նա մեզ
կարող է փրկել: Եյն տկար աշակերտը, որ
պաշտպանութիւն է գտած Փրկչի կարողու-
թեան տակ, պիտի չ' վախենայ ոչ մի վր-
տանգից: Փրկիչը ասումէ նորան „Եմ շը-
նորհքս հերիք է քեզի. ինչու որ իմ զօրու-
թիւնս տկարութեան մէջ է կառարվում:” Եյն
նա պատասխանումէ առաքեալի հետ թէ՝
„մէ յօժարութեամբ աւելի իմ տկարու-
թիւններիս վերա պիտի պարձենամ, որ
Քրիստոսի զօրութիւնը իմ վերաս հանգչի.
Երբոր տկարանումեմ, այն ժամանակ զօրա-
ւոր եմ.” (Յ. Կոր. Է. 9. 10):

„Ես եմ.” Եյն ձայնը կարողութեան
ձայն էր: Եշակերտքը իսկոյն ճանաչեցին
նորան, քանզի անսած էին որ երբ նա ասաց.
վերկաց մահիճդ ա՛ն և գնա՛, և անդա-
մալցներ բժշկուեց: Կա ասաց. (Եփփաթայ)

բացուի՞ր և խուլի ականջները բացուեցան։
Վա ասաց վե՛րկաց և մեռեալը վերկացաւ
նստեց և սկսեց խօսել։ Վա օրհնեց հինգ
հացը և երկու ձուկը և հինգ հաղար մարդ
կշունալուց յետոյ 12 կողով լեցուեց ա-
ւելցած կոտորներից։ Աշակերտքը մի անգամ
էլ պատահած էին արդէն փոթորիկի, երբ
Փրկիչը քնած էր նաև ետևի կողմի բարձի
վերա։ Վոքա վախի մէջ էին ինչու որ ալիք-
ները ծածկումէին նաւին։ Իայց երբ Փրկիչը
սաստեց հողմին, և ծովին ասաց, Դադարի՞ր՝
լուս կացի՞ր, և հողմը գաղարեց, և խա-
ղաղութիւն եղաւ։ Եւ արդ պիտի շփարատի՞
աշակերտաց բոլոր վախը, երբոր մի և նցն
ամենազօրեղ ձայնը ասաց նոցա. . .քաջեղի՞ք։"

Ո՛վ տառապեալ քրիստոնեայ, գեպի քեզ
գոչող ձպինը հիմա պիտի անձանօթ չլինի
քեզ։ Հիշե՞ր թէ քանի՞ փոթորիկների մէջ
նա փարատեց քո վախի և մեղմց տրտու-
թիւնգ։ Անցեալ գարերի բոլոր Ակեղեցւոյ
պատմութիւնը ներկայացնումէ մի պատմա-
բանութիւննորա հրաշալի ազատութիւնների,
որ տալիս էր Քրիստոս իւր ժալովդին։
Վորա աշակերտքը միշտ կրած չե՞ն փոթո-
րիկների հարուած և Տէրը միշտ ազատած
չէ նորանց։ Աներկրայ՝ քրիստոնեայք միշտ
եղած են հարստահարեալ ժողովուրդին, բայց

ո՞վ էր նոցա հետ և ո՞վ էր պահպանում
նորանց փոթորիկների մէջ, եթէ ոչ Փրկնչը։
Քանի՞ անթիւ վկաների բաղմութիւն հաս-
տատումէ իւր սէրը։ Ի՞նչքան շատ բազ-
մութիւն է եկած մեծ նեղութենից ձերմակ
հանդերձներ հագած, որ փառք և պատիւ
մատուցանեն Աստուծուն և Գաղանին։

Ա.յ'՞ այս ձպինը երբեք խօսած չէ ՚ի
զուր։ Հանդարդ կաց ուրեմն վշտակոծ աշա-
կերտ և մտածի՞ր նորա վերա՝ ինչ որ արդէն
եղած է քո համար։ Եւ չարշարուեց և մե-
ռաւ քո տեղ. գու կորած էիր՝ նա դաւա-
քեզ. թշնամի էիր՝ հաշոացրուց. գերի էիր՝
աղասեց. կոյր էիր՝ բժշկեց. մեռած էիր՝
կենդանացրուց. նա լուաց քեզ իւր արիւ-
նովը և հացցրուց իւր մաքուր և ձերմակ
հանդերձը։ Եւ նորոգեց քո ապականեալ
ընութիւնդ եւ հաղորդակից արաւ քեզ
իւր Հոգուն, որը քեզ լուսաւորումէ և միսիօ
թարում։ Եւա քեզ մացրուց իւր Հօր բնակ
կարանը և Աստուծոյ որդի արաւ։ Յա հիմա
էլ բարեխօսումէ և պատրաստում քո համար
վառաց բնակարան՝ տալով քեզ անապական
և յաւ իտեհական կենաց ժառանգութեան ար-
տօնութիւնը։ Քանի՞ անգամ է ՚ա սիրով
գոչել զեպի քեզ Քանի՞ անգամ է բոր-
բորած քո սիրոդ՝ երբոր ՚ա ուղեկից եր

Քո հետ ճանապարհումը Խնչպիսի խաղա-
ղութիւն և ուրախութիւն ես զգացած, եր-
բար ՚1,ա խօսակցումք քո հոգոյդ հետ ՚1,ա
այն ժամանակ շղարձրո՞ւց քո տրտութիւնդ
ուրախութեան, գիշերը ցերեկի և փոթորիկը
խաղաղութեան:

՚1,ա որ այդ ամենը արաւ քո համար՝
թոյլ պիտի տայ՝ որ կորչես: Դու չե՞ս
կարող հաւաստեաւ օգուտ քաղել այն ապա-
ցոյցւն, որ յառաջ բերաւ Ո՞անուէի կինը
իւր մարդուն մսիթարելու համար, երբոր
նա՝ Տիրոջ հրեշտակին տեսնելով՝ վախե-
ցաւ որ մեռնեն՝ ..իմէ որ Տէրը մեզ մեռ-
ցընել ուզէր, մեր ձեռից՝ ողջակէլը և հացի
ընծան չէր ընդունիլ, և այս բոլոր բաները
մեզ չէր ցոյց տալ” (Պատու. էժ. 23). Եթէ
Փրկիչը թողնել կամենար քեզ, ինչո՞ւ պի-
տի այդ բոլոր բաները անէր քո համար,—
ինչո՞ւ պիտի գոչէր քեզ իւր շնորհընվը,
նորոգէր իւր Նորոգը, մսիթարէր իւր
սիրով և պահպանէր մինչեւ հիմա: Եթէ
՚1,ա գտաւ քեզ երբ դու օտարացած էիր
նորանից, հիմա պիտի չպահպանէ որ նորա
որդին ես: Եթէ նա սիրեց թշնամին պի-
տի թողնէ բարեկամին: ՚1,Ա ասնդի թէ որ
թշնամի եղած ժամանակներս Խստուծոյ հետ
հաշտուեցինք իւր Որդոյ մահովը, որչափ

աւելի մեր հաշտուած ժամանակը պիտի
ապրենք ՚1,որա կեանքովը” (Նորվ. է. 10):
Ո՞ի՞ թէ ՚1,ա կմերժէ մեր աղօթքը որ
ինքն է թելազրել, պիտի անկատար թողնէ
մեր յոյսերը որ ինքն է ազգել և պիտի
շաւարտէ այն գործը՝ որ ինքն է սկսել:
Ո՞ւ Տիրոջ մինչեւ հիմա արած բարերարու-
թիւները ստոյգ գրաւ են հանդերձեալ ժա-
ռանկութեանը և արդէն կատարուած աղա-
տութիւնները ճշմարիտ առհաւատչեաներ
են ապագայից համար. Քրիստոսի աշա-
կերտը ամեննին պատճառ չունի անհան-
գիստ լինելու: Ո՞եղ ասուած է „ամեն
հոգսը ՚1,որա (Քրիստոսի) վերա զցել” ին-
չու որ ՚1,ա մեր համար հոգումէ:” Եւ
անօգուտ է՝ եթէ կամենանք այն բանը անել,
որը նա առած է իւր վերա և պիտի կատա-
րէ աւելի լաւագոյն քան թէ մէք: ՚1,ա կա-
մեցաւ անել մեր տեղ ամեն բան, ոչ միայն
մեր ապահովութեան կարևոր եղածը, այլ և
մեր երջանկութեանը: ՚1,որա անսահման
սէրը հարկադրումէ իւրան ընտրել միշտ այն,
ինչ որ անհուն իմաստութիւնը բարւոք է
համարում մեր համար, իսկ նորա ամենա-
կարողութիւնգ միշտ կարող է կատարել
այդ ամենը: Արդեօք մէք մի այդպիսի պաշտ-
պանութեան տակ կատարելապէս ապահով

չե՞նք: Ենթաղը ինք՝ թէ տարերքը մեր իշխանութեան ներքեւ են և թէ մեք որևէ իցէ մի առանձին նպատակի հայար բարձրացրած էինք փոթորիկ քամի: Մի և նոյն ժամանակ լինէինք մի նախ մէջ, որ պիտի ընկղմէու, մեծ զուարձութեամբ կնայէինք շառաչղջրերի վերա, իմանալով որ նոքա կատարումեն մեր յատուկ կամքը. և թէ՝ միայն հրաման տայինք պիտի տիրէր ամենէին խաղաղութիւն: Ո՞ի և նոյն չէ իրապէս. միայն թէ քամու կառաւարութիւնը յանձնուած չէ մեղ, այլ կախուած է Փրկչի ինքնիշխան կամքից: Ո՞ի թէ գորանով մեր քաջասըրտութիւնը պիտի նուազի: “Ա, ա մեղանից աւելի լաւ, չէ իմանում պատճառը՝ որ փոթորիկը հարկաւոր է, և այն վայրկեանը՝ որումէջ նորա գորութիւնը պիտի ընդմիջապտէր: Պիտի բոլորովին չյանձնուինք նորա սպյրական հոգացողութեանը, և ուրախ լինինք նորանով՝ որ փորձութիւնը միայն գործակից կլինի մեր բարիին և ոչ երբէք պիտի չարիք պատճառէ մեղ:

“Հա եմ.” Վ.Յ. Խօսքի մօտ պէտք է փարատին բոլոր մեր տրտութիւնները: Եւ ինչ է նոցա պատճառը. այս կեանքիս հոգսիրը: Ծայց Փրկիչը ասումէ. „օգս մի անէք ձեր կեանքի համար՝ թէ ինչ պիտի

ուտէք, կամ ինչ պիտի խմեք, ոչ էլ չեր մարմինների համար. թէ ինչ պիտի հագնիք: ‘Այեցէք երկնքի թռչուններին, որ ոչ սերմանումն եւ ոչ հնձում եւ ոչ ամբարի մէջ ժողովում, և ձեր երկնաւոր այրը կերակրումէ նորանց. չէ՞ որ դուք նոցանից աւելի լաւ էք: ’Այեցէք դաշտի շուշաններին ինչպէս են աճում, ոչ աշխատումն եւ ոչ մանում. բայց ասումեմ ձեզ՝ որ Աղոթմանն էլ իւր բոլոր փառաւորութեանը մէջ նոցա մինի պէս չհագուեցաւ: Աւստի թէ որ գաշտի խոռոշը որ այսօր կայ եւ վաղը փուռն է զցվում. Աստուած այնպէս է հազցնութ: ապա որչափ աւելի ձեզ՝ թերահաւատներ” (Ամութ. ը. 23-34): „Ամէն բանները բարիի գործակից են լինում նորանց՝ որ Աստուծուն սիրումն” (Հառնչ. ը. 28.): „Տիրոջ հրեշտակը իւր բանակը նորանից վախեցողների չօրս կողմն է գնում եւ նորանց պահումէ: Տէրը ինքրողներին մին բարութիւն պակաս պիտի չլինի: Արդարի նեղութիւնները շատ են. բայց Տէրը ամենից կիրկէ նորանց” (Ամող. պ.):

“Կա ուրեմն՝ ինչիցն է վախում քրիստոնեան: Եթէ Փրկիչը այդքան հոգումէ նորա մարմնոյ համար, ապա որքան աւելի կհոգայ եւ նորա հոգոյ համար: Երդեօք

նորա խօսքերը — „իմ շնորհքս հերիքեքեղ” — պիտի չքաջալերեն մեզ մեր կեանքի բոլոր գժուարին հանդամանաց մէջ։ Այն տվուած չեն իմաստութիւն, արդարութիւն, սրբութիւն եւ փրկութիւն։ Ուե եւ մեք մեղանում ինչքան էլ ինեղձ, անարդ, կոյր եւ մերկ լինենք, նորանում լինումենք կատարեալ։ Եւ արդեօք կարելի՞ է գորանից աւելի բան ասել քան թէ նա ասած է մեզ խաղաղութիւն տալու համար։ թէ՝ ո՛վ վշտաց տէր, ալէկոծեալ, անմիմար ողորմելի, Այի փոքր վայրկեան երեսս քեղանից ծածկեցի, բայց յաւիտենական ողորմութեամբ պիտի ողորմեմ քեղ։ Եւ լեռները պիտի վերանան եւ բլուրները պիտի սասանին, բայց իմ ողորմութիւնս քեղանից պիտի չվերանայ, եւ իմ խաղողութեանս ուխտը պիտի շասանի, ասումէ Տէրը որ քեղ կողորմէ” (Ես. ՀԵ. 6- 14)։ Այի վախենար, վասն զի ես քեղ փըրկեցի. քեղ քո անունովդ կանչեցի. դու իմս ես։ Երբոր ջրերից անցկենաս, ես քո հետ պիտի լինեմ, եւ երբոր գետերից անցանես քեղ պիտի չկոխեն, երբոր կրակի միջով գլաս, պիտի շայրուիս եւ բոցը քեղ պիտի չմրկէ, քանզի ես քո Տէր Աստուածդ, Խորայէլի Ուրբոր՝ քո փրկիչդ եմ. (Ես. ԷՒ. 1-3)։

Հաւատարիմ է նա՝ որ խոստացաւ. թէ՝ „երկինքը եւ երկիրը պիտի անցանին, բայց իմ խօսքերութիւն պիտի չանցանին, (Պակ. իա. 33)։ Եւ նա ասաց իւր ժողովրդի համար՝ թէ՝ „ես նորանց յաւիտենական կեանք կոտմ, եւ յաւիտեան պիտի չկորչնեն. եւ մէկը իմ ձեռքիցս պիտի չյափշտակէ նորանց” (Յով. չ. 28)։

Հաւատամնք նորա խոստմունքներին, եւ կլինի մեծ խաղաղութիւն։ Երբոր աշակերտքը ընդունեցին Փրկչին նաւի մէջ, հողմը դադարեց եւ նոքա հասան ծովի միւս կողմը նմանապէս երբոր մեք ընդունումենք հաւատաով Քրիտոսին ամբողջապէս մեր սրտի մէջ, փոթորիկը հանդարտումէ, դրսի աղմուկները կարող են շարունակիլ, բայց նոքա ալլ եւս պիտի չյարուցանեն ոչ մի ներքին փոթորիկ։ Հաւատացեալը՝ որ իւր միտքը եւ ոիրտը ուղղած է առ Վատուած՝ միշտ խաղաղութեան մէջ է։ Այի մարտիրոսուով՝ որ կատակի համար դրուած էր ժողովրդի առաջեւ երկաթի վանդակի մեջ՝ ասաց հանդիսականաց մէկին՝ որ մի սցել էր զարմացած նորա խաղաղութեան վերա։ — գուք կտեսնէք այս վանդակապատը, բայց այն՝ թէ ինչ է ծագում այժմ իմ սրտիս մեջ՝ չէք կարող տեսնել։ Նմանապէս եւ այն ամենքը՝ որ նայումեն

միայն արդաքին նեղութեան վերա եւ չեն
տեսնում ոչ վհատութիւն եւ ոչ տրտունջ, —
զարմանումեն այն խաղաղութեան վերա որ
ցուցանումեն քրիստոնեաները: “Առքա լսու-
մեն որոտմունքի ձայներ եւ կոհակների
շառաչիւն, բայց մի եւ նոյն ժամանակ չեն
կարողանում որոշել Փրկչի ձայնը. „Ես եմ.”
որը ուրախանցնումէ փորձանաւոր աշակեր-
տին: “Առքա կտեսնեն դրսի գժուարու-
թիւնը, բայց չեն կարող տեսնել այն ներ-
քին միկմարութիւնը՝ որ վայելումէ քրիս-
տոնեան, երբոր . . . Առա կեանքը պահուածէ
Կատոււծոյ մօտ Քրիստոսի հետ:”

Առող ուրեմն իբրև պատասխան Կատու-
ծոյ խոստունքներին՝ գոչենք հաւատքի
զօրեղ խօսքերովը: Առող փառաբանութեան
երգը վեր բարձրանայ այս տապանի միջեց,
որ պահումէ մեզ փոթորիկի երեսից: „Կա-
տուած մեր ապաւենը և զօրութիւնն է. նե-
ղութիւնների մէջ խիստ օգնական է գտնը-
լում: Առա համար պիտի չվախենանք,
թէ և երկիրը փոխուի և լեռները ծովի
մէջ տեղը գտնուին” (Ոսու. Խու.): „Ով
Տէր՝ զօրաց Կատուած. ո՞վ է Քո պէս հզօր
Տէր:” Դու տիրումես ծովի հպարտութեան
վերա, երբոր նորա ալիքները բարձրանու-
մեն, դու հանդարտեցնումես նորանց: „Խնչո՞ւ

ես ցածանում՝ ով իմ հոգիս, և ինչո՞ւ ներ-
սում անհանգիստ ես. Վատուծոյն յուսա՛
ինչու որ մի անգամ էլ պիտի գովեմ ‘Առ-
րան. նա է իմ երեսիս փըրկութիւնը և իմ
Վատուածս:”

Խոկ եթէ, ո՞վ ընթերցող, դու Փրկչի
աշակերտը չես. եթէ սիրումես մեղքը և աշ-
խարհը, եթէ քո սիրտի հնազգեցրած չես
Քրիստոսին. ապա քո կրօնքդ ոչ մի բանի
օգուտ չունի. դու թողուած ես ալիքների
կամացը: Ուստի՝ երբոր դու օտար ես Փրկ-
չի սիրուցը, ապա ‘Ա, ա շասում խաղաղու-
թիւն քեզ! Դու մի այնպիսի սոսկալի
վտանգի մէջ ես, որ անհնար է երեսակայել:
Դու նաւարկումես կեանքի ովկիանոսի մէջ
առանց կողմնացուցի, առանց զեկաւարի,
առանց խարսխի և չունիս քեզ կառաւարող
զեկը: Փոթորիկը պիտի յարձակի քո վերա-
իւր բոլոր կատաղութեամբը: Ալիքները
պիտի ծածկեն քեզ! Խնչգէս արձիճը զրի-
մէջ, այնպէս էլ դու պիտի ընկդմիս յուսա-
հասութեան և խաւարի անգունգի մէջ, ուր
երբէք յայսպիտի շթափանցի և լուսոյ մի կայծ
պիտի չհասանի: Դու պիտի վախենաս. թէ-
պէտ հիմա տեսնում չես ոչինչ վտանգ, և
ոչ մի ալիք վրդովում չէ քեզ! — բայց
վտանգը նոյն իսկ այդ խաղաղութեան մէջ է:

Այդ խաղաղութիւնը հեղեղե խաղաղութիւն է, որ պատրաստ է վայր հոսելու մեծ շառաչիւնով։ Խորուսուր քո առաջնորդ է, գժոխիքը բացումէ իւր բերանը՝ որ կլանէ քեզ։ Անտարբերութիւնը այս վիճակի մէջ անմըտութեան նշան է, իսկ ուրախութիւնը ապացոյց է բոլորովին մտաց խանգարման։ Ա անը — քո բաժինդ է։ Եւ երանի թէ՝ գու կարողանայիր գոչել քո բոլոր սրտովդ։ Թէ „Տէր՝ ինչ անեմ որ փրկուիմ, ինչ բարի գործ գործեմ, որ յաւիտենական կեանքը ընդունեմ” (Վատավ. մլ. 16):

Ո՛վ ընթերցող, կարելի է գու Քրիստոսի աշակերտ չլինելով, խորին արտօնութեան մէջ ես և կարօտումես միսիթարութեան. բայց միսիթարութիւն չկայ քո համար։ Եթէ գու խնդրումես նորան այս տողերի մէջ, սոքա քեզ միսիթարութիւն պիտի չտան. ինչու որ Աստուծոյ խօսքը միսիթարութիւն չտալիս քեզ։ Ո՞ի շփոթիր քո արտօնութիւններդ բարեպաշտութեան հետ, և գու որ փոթորիկի մէջ ես մի երեակայիր, թէ Փրկիչըն էլ քո հետ պիտի լինի որ աղատէ քեզ։ Կա միայն իւր աշակերտների հետն է լինում փոթորիկի ժամանակը։ Կա շատ է կանչել քեզ որ միաբանիս նոցահետ, բայց գու չուզելով նոցա հետ լինել.

մնացելես նստած քո սեփական նաւիդ մէջ, — և ահա գու հիմա մէնակ պիտի պատերազմես ալիքների հետ։ Ո՞ի գնիր որնիցէ յոյս յաւիտենականութեան վերա։ Ո՞ի մտածիր թէ մահը կաղատէ քեզ քո թշուառութիւններից։ Եւս առաւել զարհուրելի փոթորիկ սպասումէ քեզ միւս աշխարհքումը։ Ա յնտեղ չես գտնելու ոչ մի նաւահանգիստ, ուր կարողանաս ապաստանիլ։ Քո հոգիդ յաւիտեան ալէկոծութեան մէջ պիտի լինի, և միանգամայն երեսից գցուած պիտի մերժուի։

Ուրիմ՝ ոչ մի միսիթարութին չկայ քո համար։ Ո՞իսիթարութիւն չկայ՝ մինչ գեռ շարունակումես մնալ նոյնը, ինչոր հիմա ես, թ՛ Տիրոջ թշնամի քո չար գործքերովդ։ Եւ մինչև որ չփոխուես գու՝ կարող չես գտնել միսիթարութիւն՝ Կորանում՝ որ ամեն ստութիւնը աշումէ. քանզի Տիրոջ բարկութիւնը գիզուած մնումէ քո վերա։ Քո կեանքդ և բնաւորութիւնդ պէտք է բոլորովին փոխուին։ Եթէ ուզումես միսիթարութիւն ստանալու հնարաւորութիւնը ձեռքերես՝ նախ պիտի հաշտուես Աստուծոյ հետ. մինչև այն ոչ մի խօստմունք վերաբերութիւն չունի քեզ։ Պէտք է որ յառաջ քո մեղքերիդ բեսնիցը ազատուես որ յետոյ

թեթևանայ և քո շարչարանաց ծանրութիւնը: Աստուած ուզումէ բժշկել քո ամեն վէրքերդ, բայց կամենումէ սկսել ամենավտանգաւոր վէրքիցը: Դա կամենումէ հանդարտեցնել ամեն փոթորիկները, բայց սկսումէ ամենազարհուրելի փոթորիկից, և գործումէ միմիայն մեր աստուածային ազատչի — Յիսուս Քրիստոսի ձեռքովը: „Եռաջ ինդրեցէք Աստուծոյ թագաւորութիւնը և նորա արդարութիւնը, և այդ բոլոր բաներն էլ ձեղ պիտի տվուի՛” (Ապոլ. կ. 33: Դու կարելի է կամենումս ստանալ այդ արդարութիւնը: Դու գտնումս քո ամեն նեղութիւններդ թեթևագոյն՝ համեմատելով այն վտանգի հետ, որ սպառնումէ քո հոգուդ: Դու ուզումս փախչել եկող բարկութենից: Քո Խղճմտանքդ մեղադրումէ քեզ, Աստուծոյ օրէնքը անէծքի տակ է գցում քո մեղքերդ: Երկինքը ամպած է քո գլխի վերա, և կորուստը քո առաջեց է: Դու մտածումս թէ քեղ աւելի յոյս չկայ: Դու տեսնումս փոթորիկի մեջ Ամենակարաղ Աստուծուն, որ պատրաստ է իւր արդար գտատաստանի կայծակի հարուածովք գահավէժ առնել քեղ գժուիքի մեջ: Աստուած իսկապէս ներկայ է փոթորիկի մեջ, բայց իւր որդոյ անձնաւորութեամբը: Արդ՝ քո հայե-

ցուածքդ դարձրո՛ւ Փրկչի վերա, Դա այն տեղ է, Դա գոչումէ գեպի բոլոր հաւատացեալները: թէ „բաջ եղի՛ք:” Անք կարող չենք առանց շփոթուելու և զարհուրելու նայել Աստուծոյ վերա որպէս ստեղծողի և դատաւորի: Դա „մաշնղ կրակի” է: Դորա արդարութիւնը կդատապարտէ մեջ և ամենակարողութիւնը կսատակէ մեջ: Իսայց Աստուծոյ խօսքը յայտնել է մեզ, որ այս Աստուծոյ վախը կարող է փոխութիւնուսը, և այն հոգին որ զարհուրումէ Լորա բարկութենից կարող է հանդարտիլ Լորա ողորմութեան աներկեալութեան վերա: Ոչ մի բան խաղաղութիւն շտալ մեղաւորին՝ մինչեւ որ նա լսի և ճանաչի Փրկչի ձայնը, որ գոչումէ գեպի նա, թէ „լիս եմ:” Աւրեմն մեք պիտի նայենք այն Աստուծոյն որ Քրիստոսով աշխարհը իւր հետ հաշտացրուց: „Քրիստոս է ճանապարհը, ճշմարտութիւնը և կեանքը. մեկը հօր մօտ չգալ, եթէ ոչ Իրանով” (ՀՅ. ժ. 6: 6): Տէրը մեղանից կատարեալ հնազանդութիւն է պահանջում: Իսայց մեք ինչքան քիչ ենք հնազանդում: Օխէ որ ասենք թէ մեք մեղք չունենք, մեք մեզ ենք խաբում” (Ա. Յով. ա. 8:): „Երդար չկայ՝ ոչ մի հատ էլ” (Հատով Գ. 10): „Անդաց

վարձքը մահ է՝ (Հայկ. լ. 23): „Եւ մեղաւորները պիտի գնան յաւիտենական տանջանքը” (Ուտով. էլ. 46): Ըստստովանի իւր մեղաւորութիւնը, կամ ուղենալ անձնական գործքերով քաւել մեղքը — հաւասարապէս անկարելի է մեղլ իւրեմն՝ մեր միմայն յոյսը Փրկիչն է: ‘Ա, ա մեր տեղը մատոյց կոր Նօրը ամբողջ և ամենակատարեալ հնազանդութիւն, և մեր համար շարչարուեց: ‘Ա, որա արդարութիւնը և մահը մերը համարուեցին, և մեք փրկուած ենք ‘Ա, որա արիւնովը: „Վստուծոյ որդոյ Յեսուսի Քրիստոսի արիւնը մեղ ամեն մեղքից սրբումէ” (ա. Յակ. առ. 7), „և մեք ժառանգութիւն ենք առած Ոիրելիի ձեռքովը:”

„Նաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսին և պիտի փրկուիս” (Գարդ. էլ. 31): Վ. հալիովին և միանգամայն բաւականացուցիչ պատասխան իւրաքանչիւր մեղաւորի, որ վեշտերով պատած է և փափառումէ պատըսպարան գտանել փոթորիկի երեսից: ‘Դու պէտք է քիսուս Քրիստոսումն խնդրես միիթարութիւն, եթէ ոչ ՚ի զուր է քո խընդըրած միսիթարութիւնդ: Եւ եթէ դու Փըրկչին զիմես — ‘Ա, ա քեզ չմերժիլ: Վսապիւրոսի պէս որ ուզումէր ընկղմիւ: Ա, Տէր՝

աղասի՞ր ինձ, ահա կորչումեմ:” — և ‘Ա, ա իւր ձեռը կերկարացնի գէպի քեզ Ա. յ ձեռը արդէն երկարացրած է քեզ օգնելու համար, հաստատուիր նորա վերա հաւատքով, եւ քո հոգիդ խաղաղութիւն կգտնէ: „Վ. հա Վ. ստուծոյ Վառնը՝ որ աշխարհի մեղքը վեր է առնում” (Յակ. առ. 29): Վ. հա այն խօսքերը որոնցով կանչումն քեզ գէպի ‘Ա, որան նայել: ‘Ա, ա յայտնուեց ոչ որպէս ստեղծող, այլ որպէս բարեիօս, ոչ որպէս օրէնսդիր, այլ որպէս միջնորդ: Երբ քո խղճմտանքդ մեղագրումէ քեզ, լսի՞ր նորա ձայնը, — ‘Ա, ա գոչումէ գէպի քեզ, .. Ես եմ, Ես եմ՝ որ բոլորովին սրբեցի քեզ քո մեղքերիցդ և ջնջեցի նորանց իմ արիւնովս:” Երբոր Վ. ստուծոյ վեհափառութեան վերա խորհրդածութիւններդ զարհուրացնումն քեզ, լսի՞ր ‘Ա, որա ձայնը, .. Ես եմ.” Ես եմ ասումէ ‘Ա, ա, որ խաչի վերա թափած արիւնովս հաշտութիւն գործեցի քո համար: Ես եմ, որ իմ միջնորդութեամբս արդարագատ Վ. ստուծը եղել է մեղաւորին արդարացուցանող: Երբոր տրտմաւմն և խոռվումն նայելով քո աղքատութեան և պակասաւորութեան վերա, գարձեալ ասումէ ‘Ա, ա, .. Ես եմ:” Ես եմ որ իմ ձերմակ հանդերձներովս պիտի ծածկեմ քո մերկութիւնդ: Խմ հնազանդութիւնս և արդարութիւնս քեզ ընդունելի

կանեն Աստուծոյ: Երբ քո տկար և շարին
յաղթելու անընդունակ լինելոյդ զգացմունքը
յարձակվումէ քո վերադ և սրտաբեկ է առ-
նում քեզ, — այն տեղ էլ ասումէ ՚Նա,
..Ես եմ:” Ես եմ որ արդէն որոշած եմ
ամեն բան անել քո համար. Ես պիտի
չժողնեմ քեզ, և բնաւ երեսից պիտի
չզցեմ:

..Ես եմ:” Իւաւական է այս որ փարատէ
մեր ամեն երկրայութիւնները, խափանէ բո-
լոր վախերը և յաղթէ ողջ զժուարութիւն
ներին. Ես մեղաւոր եմ. Փրկիչը ընդունու-
մէ մեղաւորի ամենից գլխուորին էլ: Կորչե-
լու վերա եմ. Փրկիչը հենց ՚Նորա համար
է եկած՝ որ ազատէ կորչողներին. Ոչ ինչ
արժանաւորութիւն չունիմ. Փրկիչը մեր
արդարութիւն է: Ո՞ի բան չունիմ. Փրկիչը
բոլոր կատարելութեանց լիութիւնն է: ՚Նա
մեռաւ իմ տեղ. ՚Նաքը միշտ կենդանի է մեր
համար բարեխօս լինելու”: ՚Նա հոգումէ
իմ համար, զօրացնումէ և օգնումէ ինձ:
՚Նա առաջնորդումէ ինձ խաւարի մէջ,
ուր ՚խացնումէ տրտմութեան ժամանակ, պաշտ-
պանումէ վտանգի մէջ և ինձ համար տեղ
է պատրաստում երկնքում: Եթէ նա իմ
հետս է. — ՚Ի՞նչ շարիք պիտի հասանէ
ինձ: Եթէ նա իմ կողմս է՝ ո՞վ պիտի

լինի ինձ հակառակ: Ոճո՞ղ քամիները ու
ալեքները աղմուկ յարուցանեն իմ չորս
կողմումս. բայց նորա զօրութիւն չունին
և վնաս պիտի չտան ինձ, երբոր Փրկիչը
ասումէ. „Ես եմ”: Ո՞ինչև անգամ և այն
ժամանակ, երբ կհասնի իմ վերա իմ կե-
նաց վերջին փոթորիկը, ՚Նա իմ մօտ պիտի
լինի: Ռո՞ ՚թէկ մահուան շուքի ձորին
մէջն էլ պտըտիմ, շարէն պիտի չվախենամ.
վասն զի գու իմ հետս ես. քո ցուպդ և
գաւաղանդ՝ նորա ինձ պիտի մսիթարեն”
(Այլ. էֆ. 4): Ռո՞ մահուան շուքի ձորը
մութն պիտի չլինի, եթէ նորա մէջ տեսնեմ
իմ Փրկչիս, այն տեղը անմիտմար պիտի
չլինի, եթէ լսեմ ՚Նորա ձայնը: Հաւատա-
ցելը համար մահ չկայ: „՚Նա որ ինձ
հաւատումէ, թէկ մեռնի՝ պիտի ապրի,
՚Նա որ ինձ հաւատումէ, յաւիտեան պիտի
չմեռնի” (Յալ. տա. 25, 26). Փրկիչը իւր
մահով վեր առաւ մահի խայթոցը, — և
մահը գարձաւ անվնաս: ՚Նա խափանեց
մահը և ազատեց նորանց, որ ՚մահուան վա-
խովը միշտ ծառայութեան մէջ էին ապրում”
(Եթ. է. 15): Ո՞եք կարող ենք կրկնել
մեռանող բնիստոնէի խօսքերը՝ ՚Ես մահուց
չեմ վախենում, ինչուոր Փրկչին տեսնումեմ:”
Ո՞ահը վերանումէ և մնումէ միայն Յիսուս

Վրիստոսը: Ունենալով իւր ձեռումը անտե-
սանելի աշխարհի բանալին, գալիս է 'Նա
ամեն մի հաւատացելոյ մահուան անկողնի
մօտ, որ արձակէ նորա հոգին իւր մարմնոց
և լնդունէ նորան անձեռագործ բնակարանի
մէջ՝ որ յաւիտենական է երկնքումն:

Երբ որ տրտմումենք Վրիստոսումն նըն-
ջողների վերա, թո՞ղ այս մասձութիւնը մեր
սրտերին միմարութիւն տայ. թէ՛ թշնամին
շարաւ այս, կամ որև իցէ ճիւաղ (սոսկալի
հրէշ) չյափշտակեց մեր ձեռքից այն քաղցր
էակը՝ մեր սիրոյ քնքուշ առարկան, այլ
անդրանիկ Եզրօր ձեռն էր՝ որ լնդունեց
մեր մօտից թուչող հոգին: 'Նա չէ յանձնում
այս գործը իւր հրամանը կատարողներին,
'Ես կդամ և ձեզ իմ մօտս կառնեմ:
(Յուլ. ժող. 3), ասումէ 'Նա: Ունանող
Ստեփանոսը տեսաւ նորան և ասաց. ,Տէր
Յիսոսը լնդունիր իմ հոգիս': (Գործ. է.
59): Եյո՛ նա Փրկիչն էր: Եյս տրտմու-
թեան և արտասուաց սենեկի մէջ, ուր
կեանքի թոյլ շնչառութիւնը հոգացվումէ
մի այնպիսի քնքուշ կերպով, և ուր ամեն
բան ձեռնարկած է, որ բաժանման աշաւոր
վայրկեանը ուշանայ, Փրկիչը ասումէ. ,Ես
եմ:՝ Եյս տիսուր տեղումը՝ ուր ամենաքըն-
քուշ սիրոյ գործունեւթիւնը այլ ևս կարող

չէր արգելել տագնապների սաստկութիւնը,
լսվումէ մի ձայն. ,Ես եմ:՝ Եյս թալումի
յուղարկաւորութեան ժամանակ, երբ ամեն
մի քայլափոխ տանում մօտեցնումէր բարե-
կամներին և ազգականներին իւր թէ բուն
իւրեանց գերեզմանին, Փրկիչը՝ որպէս 'Նա-
յինի մէջ, մօտենալով դպչումէ դադաղին և
ասում որբեարիին, նորա որդոյն և անմսի-
թար բարեկամին. ,Ես եմ:՝ Բացուած
գերեզմանի մէջ, ուր նորա մարմի հետ, որ
ինքը այլ ևս մեր հետ չէ, թաղվումէ քանի՛
զուարթ ուրախութիւններ և քանի՛ քանի՛
զոյսեր, Փրկիչը որպէս թէ Բեթանիայում
կանգնումէ լաց լինողների մէջ և նոցա ար-
տասուաց հետ խառնելով իւր արաասուքը,
թեթեացնումէ նոցա տրտմութիւնը, ասելով.
,Ես եմ:՝ Եյո՛ Փրկիչը ինքն է լնդունում
թուչող հոգին, որ ներս տանէ նորան սիրոյ,
բերկրութեան և խաղաղութեան բնակարանի
մէջ և հանգստացնէ այն օթևանների մէջ
ուր երբէք արտասուք չեն թափվում, վիշտ
կամ տրտմութիւն չկայ և բնաւ մահ չեն
ճանաչում: Եպա ուրեմն մեք փոխանակ սուգ
անելու պիտի միմարուինք մտածելով նոցա
կատարեալ և անարատ երջանկութեան վերա,
որ այս տեղից բաժանուեցին: Փոթորիկի մէջ
մեք առ ժամանակ կորցնումենք մեր տեսու-

թենից նորանց, որոնք մեր համար կեանքից
առաւել թանկագին էին, բայց այս փոթորիկի
մէջ ծագումէ դէպի մեզ և մսիթարութեան
մի նշոյլ որովհետեւ նոքա ընդունուած
են երկնքի մէջ և լուսաւոր ու երջանիկ
հոգիների հետ ուրախութիւն են կատարում
Տիրոջ տաճարի մէջ, ուր այլ ևս չկայ ծով՝
ծախորդութեանց փոթորիկներով ալէկոծու-
ած: Այսպիսի մտածմունքը պէտքէ պաշտ-
պանէ մեր հոգին այն ժամանակ, երբ յար-
ձակվումն մեր վերա այդ փոթորիկները:
Մահը հաւատացեալին միաւորող կապէ է
Փրկչի հետ: Որքան շարիքը ծանր է այն-
քան մօտ է Փրկիչը: Քանի մութն են ամ-
պերը, քանի սաստիկ որդումունքը և քանի
կատաղի ալիքները, այնքան յայտնապէս
գուշակումն նոքա մեր լրիկնաւոր պաշտ-
պանի մօռութիւնը: Այս խոռովութեան մէջ
գոշումէ նա ... Ես եմ: Ես եմ, որ պատ-
րաստեցի քեզ տեղի և կամենումմ ինքս քո
առաջնորդդ լինիլ: քաջ եղիք, Ես եմ, մի
վախենար: Ենչ մի թէ մեք պիտի
փախչենք նորանից: Աչ մեք աւելի պիտի
ուրախաննք նորանով՝ որ մեր աղատու
թիւնը մօտեցած է և մեք պիտի լինինք
Քրիստոսի հետ, փառն զի նորա հետ լինիլը
մեր ճշմարիտ երջանկութիւնն է:

Վնցեալները ես մի ծովեզրեայ քաղաքա-
բում էի (*): Մի օր փոթորիկ քամին բար-
ձրացած էր և ես գնացի առաւօտեան ծովի
ափը: Ծուտով նկատեցի ալիքների մէջ եր-
կու ձկնորսական նաւեր, որ մօտենումէին
նաւահանգստին: Կաւերի մէջ լինող մարդիկը
շատ օրեր արգէն անցուցած էին մրրիկների
և փոթորիկների գէմ պատերազմելով, եւ
մնացած էին այժմ գրէթէ առանց պաշարին
Ծատ կցանկային նոքա հասանել վերջապէս
ապահովութեան. հանգստեան և առատու-
թեան, եւ այս ամենը կարծվումէր արգէն
այսպէս մօտ: Իսյց ջրայտակիւայ ժայռերը
որ պատած էին ամբարտակի (բուրջ) շուրջը
սպառնումէին սոսկալի վտանգ եւ բազմու-
թիւնը, որ մօղովուած էր ծովափումն տես-
նումէր յայտնապէս, որ ձկնորսաց աշխատու-
թիւնը հասանել ցածրքին՝ պէտք է լինի
նոցա կորստի պատճառ: Կոյն ժաման մի
քանի մարդիկ վեր ելան փարոսի վերա
վասեցին լապտերը եւ նշան տուին որ մնան
նոքա բացարձակ ծովի մէջ: Այս նախազգու-
շութիւնը երեւումէ որ կարողացան իւր
ժամանակին առնել: Հուսոյ եւ երկիւզի
վայրկեանը հասած էր: Այն ժամանակ տե-
սան՝ որ նաւերը առին ներհակ կողմին ը-
(*). Ճեղինակը ասումէ իւր համար:


թացք եւ խարտւած իւրեանց յոյսերում, վաստակած եւ տրտմած նաւորդները գնացին նորից պատերազմելու փոթորիկի հետ: Ի՞նչ տարբեր է՝ մտածեցի ես, «Քրիստոսի աշակերտի վիճակը: Փոթորիկի կատաղութիւնը ոչ միայն հեռացնում չէ նորան իւր ապատանարանից, այլ եւս առաւել հարկադրումէ նորան մեծ ապահովութեամբ եւ ուրախութեամբ մտանել նոյն ապաստանարանի մէջ: Աստուածային սիրոյ նաւահանգիստը միշտ մատչելի է, եւ որշափ առաւել է մեր տկարութիւնը, այնքան եւս դիւրին է նորա մուտքը: Եշ վերջի հանգստեան տեղը՝ երկինքը — փառաց բնակարանն է, ուր աստուածային սէրը յայտնվումէ իւր բոլոր լիութենովն, եւ այն տեղ երրէք չեն իմանում ոչ ինչ վախ, — երբ վերջին եւ մեծ փոթորիկը կհասնի մեր վերա, նա մեր աչքի առաջեւն է — այն երանութեան բնակարանը: Եշ ի՞նչ սքանչելի է երեւում նա հաւատքի աչքի առաջեւը: Ի՞նչ քան կատարեալ է նորա խաղաղութիւնը, ո՞րքան խորին հանգիստը եւ ո՞րպէս անարատ երջակութիւնը: Այն տեղ ոչ արասաուք են թափում, ոչ ազմուկ են զգում եւ ոչ փորձութիւն են իմանում: Այն տեղ փայլումէ եւ փարոսը, բայց ոչ թէ նորա համար որ նաւորդին

հեռացնէ, այլ նորան գէպի իրան քաշէ: Նորեշտակները ողջունումն մեր մօտենալը: Փըրկիշը ասումէ՝ որ մեք ոչ մի բանից շվախենանք: Ո երջին անգամ գոշումէ նա, «քաջ եղիք, իշ եմ:» Ոչ մի աշտկերտ հաղիպած չէ նաւարեկութեան այս նաւահանգիստը մտնելու ժամանակ: Խրաւի սոսկալի են ալիքները, բայց նորքա իւրեանց ուժգին յարձագմամբ միայն օգնումն հաւատացելոյ վաստակած հոգուն շուտով հասանել այն նաւահանգստին: Պատերազմը կարճ է, իսկ հանգիստը կտևի յաւիտեան: Ամենաերկար կեանքի բոլոր փորձութեանց համար մեք կարող ենք ասել մեզ սպասող ապագայի նկատմամբ: թէ ու, մեր վայրկենական թեթեւ նեղութիւնը ինիստ մեծ և շափազանց փառքի յաւիտենական առաւելութիւն է գործում մեր համար: Պատճառն որ՝ մեք այս երկող բաներին չենք նայում, այլ շերկողներին, ինչուոր երկող բաները ժամանակաւոր են, բայց շերկողները՝ յաւիտենական» (բ. Առն. դ. 17, 18), — ո՞ւր է ով մահ՝ քո խայթոցդ, ո՞ւր է ով գերեզման՝ քո յաղթութիւնդ:

Հաւատումեյ Տէր, օգնի՛ր իմ անհաւատութեան (Առն. լ. 23): Գթա՛ և ների՛ր քո խիստ աշքատ և տկար աշակերտիդ:

Ընորհի՛ր՝ որ ես միշտ մի պարզ տեսութիւն ունենամ Քո վերա, — միշտ յայտնի լսեմ քո ձայնդ, ինչպէս հանդարտ ժամանակը, նմանապէս և փոթորիկի մէջ, այնպէս՝ որ ինձանում լինի ըստ բաւականին մի քաղցր ապաւինութիւն քո „Ես եմ” խօսքի վերա, իմ սրտիս խաղաղութիւն և միմիթարութիւն տալու համար: Դու շատ անգամ ասել ես. „Եկէք իմ մօտ բոլոր յոդնած և բեռնաւորուածներ, և ձեր անձներիդ հանգստութիւն պիտի գտնէք” (Ո՞տիլ. ժ. 28, 29): **Տէ՛ր՝** հնազանդումնեմ Քո հրաւերիդ. սակայն բացի մեղքերի բեռնից և իմ անարժանութենից ոչ ինչ չեմ բերում Քո մօտ: Վալիս եմ Քո մօտ խղճալի, ցաւակար, կյոր՝ և մերկ՝ իմանալով, թէ Դու՝ պիտի չմերժես ինձ: Ես խոր ջրերի մէջ եմ փոթորիկը կատաղի է, գրսից փորձութիւններ, ներսից տրտմութիւններ պաշարումն ինձ: Վոանց Քո օգնութեան ես կըկորչմ: Արդ փրկի՛ր ինձ ով իմ Կստուածս քան զի ջրերը համնումն մինչև հոգիս: Իմ սրտիս տրտմութիւնները աւելացած են. ո՞չ փըրկի՛ր ինձ իմ տառապանքից: **Տէ՛ր՝** փրկի՛ր ինձ, կորչումնեմ: Թո՞ղ Քո սիրոց լցուցրուէ իմ խաւարը: Թո՞ղ Քո ձայնդ. „Ես եմ, մի վախենար:” հասանի իմ ականջիս

փոթորիկի մէջ: Եւ թո՞ղ իմ հոգիս՝ որուն Դու այդ քան շատ սիրեցիր, խաղաղութիւն գտնէ Քո մօտ, և իմ սիրտս ցնծա՛ Քո այցելութեամբդ, Տէ՛ր՝ այն մեծ և անպատմելի ուրախութեամբը, որ ոչ ով և ոչ ինչ աշխարհիս մէջ կարող չէ տալ մեզ, և „ոչ ով պիտի շառնէ մեզանից:”
„Եւաւերով ծովը իջնողները, և մեծ ջրերի մէջ գործ գործողները, նոքա Տիրոջ գործքերը և Եսրա հրաշքները տեսնումն անդունդի մէջ: Ա առ զի Ես ասումէ, և մրրկալից հողմը հանումէ, որ նորա ալիքները բարձրացնէ: Ելանումն երկնքը և իջանումն անդունդը, նոցա անձները նեղութենից հալվումնն. Գինով մարգու պէս գողգողումն և երերում, և նոցա բոլոր իմաստութիւնը կորչումէ: Ա, յն ժամանակ Տիրոջն են աղաղակում իւրեանց նեղութեանը մէջ, և փրկումէ նորանց իւրեանց տառապանքներից: Ո՞րիկը հանդարտութեան է գարձնում, և ալիքները գաղարումն: Դրանք էլ ուրախանումն որ գաղարեցին, և առաջնորդումէ նորանց իրանց ուզած նաւահանգիստը: Թո՞ղ գոհանան Տէրից Եւրոպութեանը համար, և մարդոց որդիներին արած հրաշքերի համար” (Ո՞տիլ. ժ. 22-32):



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՐՄԱՆԻ

204

157

35

D



1



1784